


ՉԱՓԱԾՈՅ ԳՈՐԾԵՐ





ՏԷ՛Ր, ԻՄ ՏԷ՛Ր

Ինձ ըսին թե՛ անհունին մէջ աստղերէն վեր, կապոյտ ծիրէն ալ քիչ մը վեր
Գահ մը ունիս նո՛խ, լուսապանծ, որուն շուրջը բազում անմահ հրեշտակներ
Հրաշագոր գործիքներով սպառազէն, կ'հսկեն գահիդ գերք պահապան . . .
Բայց, տե՛ր իմ տէր, ամենագոր գահիդ համար ի՞նչ հարկ այսֆան
իրարանցման:

Ինձ ըսին թե՛ թագաւոր մ'ես արդարաբաշխ եւ նժարով մը անխարդախ
Միշտ հաւասար բաշխած ես դուն, ըլլայ այդ խելք, հասակ ու գեղ, կամ աչքի
լոյս:
Բայց մենք ունինք հաշմանդամներ ու դեռ որքա՛ն անքիւ անձինք կո՛յր,
այսահար . . .

Ըսէ տէր իմ, մի՞թէ դուն ալ մարդկանց նման երկվայրկեան մը սխալեցար:

Ինձ ըսին թե՛ թէ որ ըլլանք օրէնքներուդ հաւատարիմ եւ հնազանդ,
Անդենական մեր կեանքին մէջ անմահութեան լոյսն մեզի կուտաս կաղանդ:
Այժմ ո՛վ տէր հրաշքով մը փոխակերպէ օրէնքդ այդ հին, եւ տուր մեզի
Կեանք մը անմահ՝ որ մարդն անահ արարչութեանդ միշտ խոնարհի:

ԱՐԱ ԱՐԵՒԵԱՆ

«Ծիրանի Գօտի», 1958

ՆԵՐՐՈՂԱԿԱՆ

Զօն՝ հայ գրչի մշակներուն

Աստուած երբ ուզեց հայն անմահացնել
 Բարեդէպ տեսիլք տուաւ Մաշտոցին,
 Գրասէր հայրն այդ հաննարամիտ
 Դարբնեց հայ գրերն տիեզերափայլ:
 Եւ այնուհետեւ գիրերն հայկական
 Զերթ աստղեր անմար յաւէտ մշտարծարծ
 Էջերն գիտութեան անմահացուցին:
 Ընդունակ հայեր միաձայնութեամբ
 Թեւ տուին հայոց մտածումներուն:
 Ժանգոտած օտար տառերու փոխան
 Ինքնափայլ հայ գիրն տակաւ լոյս սփռեց
 Լուսամիտ դպրաց մտաց խորերէն:
 Խոնարհ, անձանձիր հայոց դպիրներ
 Ծիրանածաւալ գիւտն այս երկնատուր
 Կամաւորաբար գերթ հզօր շաղախ
 Հայ ժողովուրդի սուրբ էութեան հետ
 Զույեցին հզօր օրհնեալ ձեռներով:
 Ղեկավար տարրեր կամֆով միաձոյլ
 Ճանապարհ բացին կեանքի ու լոյսի:
 Մթապատ ամպեր հայոց երկինքէն
 Յաւիտենապէս խոյս տուին իսկոյն:
 Նորագոյն տառերն սուրբ ու եզական
 Շունչ տուին Աստուծոյ ընտիր խօսքերուն
 Ոգեկան անյայտ ոյժի օգնութեամբ:
 Զֆնաղ հայորդիք Սահակ եւ Մեսրոպ,
 Պանծալին Եզնիկ, Ղեւոնդ եւ Կորիւն,
 Զանասէր կղերք եւ այլ իմաստունք
 Ռօշնական վագֆով ու վեհ հաւատքով
 Սուրբ Գիրքն հայոց շունչով օծեցին:
 Վսեմ գործն այս յոյժ սրբախորհուրդ
 Տարածուեցաւ ու դարձաւ անվախճան:
 Րամայն զգօններ եւ ազգը ամբողջ
 Ցնծատօններով յաւերժացուցին
 Իին գիրն փոքրիկ եւ այր, բեն, գիւմ ու ֆէն:
 Փառք գրագիւտին, անմահ Մաշտոցին
 Քանգի գիրն հայոց այսօր անսասան
 Եւ մշտանորոգ բիւր նանանչներով
 Օրհնութիւն եւ լոյս անվերջ կը ջամբէ
 Տիգրիֆոս հայուն եւ հայ քնարին:

«Պայֆար», Յուլիս 26, 1962

ԿՈՅՐ ԱՔԼՈՐԸ

(Սուսկ)

Ատենօք կար մի ափուր,
Ունէր գեղարդ փառաւոր,
Իր կտուցն էր կեռ ու սուր,
Սակայն ինքն էր ծեր ու կոյր:

Ձա՛յն ունէր ձայն եւ ի՛նչ ձայն,
Ինքն էր միայն համաձայն
Թէ իր նման մի ափուր
Չկար ո՛չ սար, ոչ մի ձոր:

Մերք կտուցն իր որդակեր
Մինչեւ երկինք կ'երկարէր,
Կտցահարել փորձելով
Երկնի աստղերն լուսաբով:

Ան կր կարծէր աստղերն են
Գարեհատիկ կամ ցորեն,
Ձորս երբեմըն գերք գանձեր
Դաշտերուն մէջ կը գտնէր:

Կ'ուզէր թռչիլ, վեր թռչիլ,
Արծիւներու նմանիլ,
Չէր գիտեր թէ թելերն իր
Թռչելու չեն յարմարիր:

Կեանքին մէջ միշտ ձախողած,
Կոյր ափուրը սրտնեղած,
Խօսքեր նետեց անպատկառ
Բիւր աստղերու լուսավառ:

Օր մ'ալ նման մի չար մանչ,
Մեծ գայրոյթով բարձրականչ,
Կանչեց հաւերն անհաշիւ
Ըսաւ. տուէ՛ք ինձ պատիւ:

Հաւերն իսկոյն միաձայն
— Վա՛յ քեզ ծեր ու անպիտան,
Ըսէ՛, մե՛նք ալ իմանանք,
Քու ո՞ր բանիդ պատիւ տանք:

ԿԱՅԾԱԿ

«Պայթար», Օգոստոս 10, 1962

ԹՈՂԷ՛Ք ԵՐԳԵՄ

Թողէ՛ք երգեմ՝ Հայաստանի այգը վանմ
Ու հոգեզմայլ երեսանը արեգնադէմ:

Թողէ՛ք երգեմ՝ հայրենական արեւը վառ
Ու արեւով ոսկեգօծուած դաշտ ու անտառ:

Թողէ՛ք երգեմ՝ աշխատաւոր ամէն մի անձ
Ու համբուրեմ ձեռքերն անոնց արեւախանձ:

Թողէ՛ք երգեմ՝ մտածումի ամէն մի ջահ
Եւ անվեհեր մարտիկներն սահմանապահ:

Թողէ՛ք երգեմ՝ դաստիարակներն համբերատար,
Որ անընդհատ լոյս կը ջամբեն հօր ու վառ:

Թողէ՛ք երգեմ՝ մէն մի հիւղակ, մանուկ ու մայր,
Ամէն օնախ, ամէն մասունք ու սրբավայր:

Թողէ՛ք երգեմ՝ օրհնեալ գիւտը հայ գիրերուն
Ու լուսամիտ հանճարները ոսկեդարուն:

Ու վերջապէս, թողէ՛ք երգեմ հայու հոգին,
Աշխատունակ, արիասի՛րտ հայու հոգին:

«Պայլար», Օգոստոս 16, 1962

ԹՌՉՆՈՑ ԱՇԽԱՐՀԷՆ

(Առակ)

Հին դրացի երկու հաւեր,
Մին փետրագարդ, մին կոուսւէր,
Մոռցած իրենց նախանձ ու հեռ,
Խորհուրդ ըրին քով քովի գալ
Խորհիլ, խօսիլ գերք առաքեալ:

Փետրագարդը կոուսւէրին՝
— Գոյրիկ, քոյրիկ, մեր գէշ վարքին
Արար աշխարհ կը ծիծաղի,
Զ'ըլլա՞ր որ մենք աղի, լեղի
Մեր վէները թողունք իսկոյն
Ըլլանք քոյրեր ազնուագոյն:

Կոուսւէրը պատասխանեց.
— Չարին մէկը թակարդ լարեց:
Ու քանի կայ չարն անոպայ
Այս աշխարհին հանգիստ չկայ.
Եկուր որ մենք ժողով սարքենք
Տանք աշխարհին անշեղ օրէնք:

Եւ հապնեպով որոշեցին
Գիր մը դրկել հնդկահաւին,
Կանչել նաեւ հէք աղանին,
Գիր մ'ալ դրկել սէգ արծիւին,
Եւ թեւաւոր փոքրը ու մեծ
Թոչուններուն հեռու թէ մերձ:

Թոչնոց ցեղի այդ ժողովին,
Շատ բացառիկ այդ ժողովին,
Եկան թոչներ արեւելէն,
Եկան, եկան արեւմուտէն,
Եւ հիւսիսէն ու հարաւէն
Եւ հեռաւոր բեւեռներէն:

Ու հաւերէն մէկը անշուշտ
Մաղթեց անոնց բարի գալուստ:
Յանկարծ արծիւն միջամտեց
Թէ ամէնէն — ես եմ երէց,
Ուստի ես եմ յար պատուարժան
Սոյն ժողովի վեհ նախագահ:

Եւ աթոռի վէնը հարկաւ
Խրոխտ արծիւն ինք շահեցաւ:

Ու երկնասլաց թռչունն հպարտ
Քիչ մը ցասկոտ, ընդմիշտ հանդարտ
Հաւնոցին էն բարձր խաւէն
Յորդեց բառեր սրտին խորքէն:

— Ո՛վ դուք անբախտ բախտակիցներ,
Գիտէ՞ք որ ես շատ մը դարեր
Կը տիրէի վերն ամպերուն,
Այժմ անոնցմէ վեր ու հեռուն
Աստղանաւեր տիտանական
Մոնչելով հոն կը վիստան:

Յեղակիցներս, մի՛ գարմանա՛մ
Եթէ օր մը անժամանակ
Որոտացող տարրերն այդ
Դառնան չարիք յայտնի, անյայտ:
Ու մեր կեանքը շուայտ ու շէն
Կորչի յաւէտ այս աշխարհէն:

Տխուր բան է բայց իրական,
Թէ այս երկիրն հնադարեան
Յանկարծադէպ հուր կայծերով
Գուցէ դառնայ կրակի ծով,
Ու անդադար վառի, միսայ
Մինչեւ երկիրն մոխիր դառնայ:

Հոն մօտակայ ծառին վրայ
Թառած էին բազէն ագահ
Եւ անգողն ու ագռաւը չար
Որոնք ըսին, միասնաբար.
— Թո՛ղ կործանուի աշխարհը ծեր
Բաւ է որ մենք ունենանք կեր:

Զարութեամբ լի այս խօսքերէն
Սարսափահար ցատկեց տեղէն
Խեղճ աղանիւն խաղաղասէր,
Որ կտուցէն կախուած էր դեռ
Զիթենեաց այն տերերը հին
Որ կ'ընծայուի պատուաւորին:

Արագիլն ալ խորաբափանց
Գետնէն օձ մը վերցուց յանկարծ
Որ դեռ նոր էր գանկը փշրուած
Եւ մարմինն ալ փետեկտրուած,
Ապա ըսաւ.— Աստուած վկայ
Զարեաց վիճակն այս պիտ' ըլլայ:

Եւ թռչնոց մէջ վէները սին
Կրկնուեցան ու տեւեցին:
Հին դրացի երկու հաւերն
Նորոգեցին իրենց վէներն:
Անհուն դարեր թաւալեցան,
Շատ Սաղմունք երգուեցան,
Բայց աշխարհը յար գուրկ մնաց
Բարի, արի առաջնորդէն
Զոր կը կոչենք՝ *բարին Աստուած:*

«Պայքար», Օգոստոս 22, 1962

ԵՐԵՒԱՆԻՆ

Զօն՝ հայրենարևակ ազգակիցներուս

Քեզի եկայ, յաւերժակա՛ն Երեւան,
Ու կապուտակ աստեղագարդ երկինքէդ
Հայու արդար ձեռներով
Հագար աստղեր փառեցի,
Հագար պանդուխտ հայ մանկանց
Ճակատները պննելու:

Քեզի եկայ, արեւափա՛ն Երեւան,
Եւ յուսափայլ ներկայէդ,
Արեւներէդ գալիքի
Բուռ մը կայծեր խլեցի . . .
Հուր կայծերն այդ հայրենի
Հոգիիս մէջ ամբարած
Վերադարձայ արտաշխարհ,
Արդարօրէն բաշխելու
Ի մէջ բոլոր հայերուն:

Քեզի եկայ, փաղափամա՛յր Երեւան,
Եկայ քեզի, գերք վիատեալ տարագիր:
Եւ ծոցիդ մէջ ծուարած
Տեսայ հայեր կենսուրախ . . .
Տեսայ մտքի տիտաններ
Բազմաշնորհ, բազմաստեղծ . . .
Տեսայ պողպատ բազուկներ
Զօրեղ ինչպէս Հերակլէսի բազուկներն,
Որոնք ժայռեր վիթխարի
Կը փշրէին հեշտօրէն:
Տեսայ մանկունք կայտառադէմ
Զերք արծուիկներ սրատես,
Ու պարմաններ փառարի,
Դրօշակիրները վաղուան:
Օ՛հ, Երեւան, Երեւան,
Ի տես վագրիդ ու վաստակիդ օրհնալիր
Ի սպառ արտէս հեռացաւ
Վիատութիւնս անարդար:

Քեզի եկայ, իմ դարաւո՛ր Երեւան,
Քու նոր կեանք տեսնելու
Ու բնաշխարհդ արեւոտ:
Տեսայ լեռներ բարձր ու ցած,
Լեռներ շէղ, լեռներ լերկ,
Եւ Արարատն ալեփառ
Իր երկնամերձ կատարով.

Տեսայ Գառնին անբակ . . .
 Եւ Գեղարդը վիմափոր
 Իր հնամեայ գանձերով.
 Տեսայ տանարն էջմիածնի,
 Որ կանգնած էր անյողողող
 Որպէս բերդ մը ամրակուռ,
 Բերդը հայոց հաւատփին,
 Ուր հաւատքս ամրացաւ
 Աստուածագոր իր լոյսով:

Քեզի եկայ, քսանթոքարեա՛ն Երեւան,
 Եկայ քեզի, գերք անարժան ուխտաւոր
 Եւ բարձրացայ Արին բերդ,
 Բերդն անմահ Արգիշտին,
 Ու տեսայ այն հիմնաքարն
 Որ աշխարհին անտես
 Էրերունի — քու անունդ երբեմնի,
 Ու բերդի սէգ կատարէն
 Երկարօրէն դիտեցի
 Քու պատկերդ պանծալի:
 Ի տես հրաշք պատկերիդ
 Պանդուխտի սիրտս խայտաց,
 Սփոփուեցաւ որք հոգիս
 Երբ ժողովուրդն հայրենի
 Հպարտօրէն հաստատեց
 Թէ հայութիւնն է անմահ:
 Հաւատա՛, ջան Երեւան,
 Թէ որդիդ այս ուխտաւոր,
 Վերանորոգ հոգիով,
 Պանդուխտի իր խցիկէն
 Գոհութեան ու բերկրանփի
 «Հագար շեփոր հնչեցուց»:

«Պայփար», Փետրուար 27, 1969

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ

Վերածաղկող հայրենիք իմ,
Արեւիդ դէմ թող խոնարհիմ,
Ու խանդաբորբ անհուն սրտով
Գովերգեմ քեզ նուրբ լարերով:

Հայու սիրտը, հայու հոգին
Փոթորկին դէմ կը մարտնչին,
Որ ըլլաս դուն յար յաւիտեան
Անամպ, անյաղթ ու անասան:

Պայծառադէմ, չճնա՛ղ երկիր,
Հայորդիներն աշխարհացիր,
Վսեմ փառքիդ, օրերուդ շէն
Անթիւ մաղթանք կը շփորեն:

Պանդուխտ հայուն բախտն է անյայտ,
Իսկ դու արեգ, աստղ հրացայտ,
Հայրենիք իմ, սուրբ, լուսաւէտ,
Արեւի պէս փայլէ յաւէտ:


Թող մումի պէս այրիմ, հատնիմ,
Իսկ դուն ապրէ, հայրենի՛ք իմ.
Թող կարկամին լեզուներ չար,
Երբ անգոսնեն կեանքդ դալար:

Ով յանդգնի քեզ այսպանել,
Թող թաւալի դժոխքն անել.
Ով կամենայ քեզ խոր վերքեր,
Աշխարհն ըլլայ իր սրտին բեռ:

«Պայքար», Մարտ 20, 1969

ԱՂԵՐՍԱԳԻՐ ԱՌ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Օտարութեան գորշ երկինքէն
 Այն անհրաճած,
 Քեզի եկայ, սուրբ առաքեալ,
 Քեզի եկայ իբր ուխտաւոր մը անարժան,
 Ու դամբանիդ քարին վրայ գեղաբանդակ
 Ու հրաշէկ, գիրերն հայոց անմահական
 Համբուրեցի՛:
 Համբուրեցի, հայոց գիրերն յաւերժափայլ,
 Որոնք կարծես իբր աստղեր կայծակնացայտ
 Վեր բարձրացան
 Դէպի երկինք, դէպի Աստուած,
 Դէպի հոգիդ աստուածացած:
 Վեր բարձրացան, Սրբազնութեանդ հաղորդելու
 Թէ պանդուխտն այս հայրենաբաղձ,
 Եկած հեռուէն,
 Խոնարհելով սրբազնագոյն շիրմիդ առաջ
 Կ'աղերսէ արդ,
 Որ սուրբ շունչն՝ վղ մկրտես զինք:



(Գծանկար
 «Պայքար» օրաթերթի)

Հնարագէտ Մեսրոպ Մաշտոց,
 Դուն՝ սրբացած անմահ հոգի,
 Դուն՝ փրկիչը հայոց լեզուին . . .
 Եւ նրազը հայոց խոնարհ տնակներուն . . . :
 Դուն՝ փարոսը պանդուխտ հայոց
 Փոքորկահար հոգիներուն.
 Օգնէ՛ մեզի հրաշագործ ու փրկարար
 Տեսիլքովդ աստուածային,
 Որ վտանգուած նաւակը մեր
 Զկործանի պանդխտութեան ովկիանին մէջ:
 Ցոյց տուր մեզի իմաստութեան
 Ուղիդ ուղին,
 Որ պահպանենք
 Հանանչները հայ գիրերուն,
 Հայոց լեզուն ոսկեղինիկ
 Եւ հայ հոգին ադամանդեայ:

Բազմաշնորհ Մեսրոպ Մաշտոց,
 Դուն տեսանող ու գիտարար . . .
 Փա՛ռք քեզի, որ հայ պատմութեան
 Մութ դարերուն
 Թռիչք տուիր հայոց մտքի տիտաններուն:
 Արդ կ'աղօթենք,
 Որ փրկե՛ս մեր մանուկները ծաղկահասակ,
 Որոնք ահա փոքորկայոյց ծովերու մէջ,
 Զերթ բեկորներ անօգնական,
 Լեռնակուտակ ու ամեհի
 Կոհակներէն միշտ խարանուած

Աւա՛ղ պիտի անհետանան
 Եթէ հրաշք մ'աստուածային,
 Ձեռք մը գթոս
 Չըփրկէ այդ ծաղիկները նաւաբեկեալ:

Շնորհատու ով սո՛ւրբ Մեսրոպ,
 Խնդրանքն այս քափառական ուխտաւորին
 Արժանացուր ունկնդրութեանդ,
 Ու տեսիլիդ անմահական նախանշներով
 Բիւրեղացուր մեր մտածման հորիզոններն
 Որ քեզ նման, մենք ալ, մե՛նք ալ,
 Լուսաւորենք նախապարհը հայ նամբորդին,
 Որ քեզ նման
 Ձինենք հայոց հոգիները աստանդական,
 Քու երկնատուր ու յղկուած
 Աստեղաշող հայ տառերովն անգուգական:

«Պայքար», 1969

ԳՈՎՔ ԵՐԵՎԱՆԻՆ

Հե՛յ ջան Երեւան,
 Դուն հնադարյան ամբոց անառիկ . . .
 Դուն ամեն հայու դրախտ հայրենիք,
 Այգիներդ դալար, երկինքդ պայծառ,
 Ինքդ դարձել ես արեւ բոցավառ:

Հե՛յ ջան Երեւան,
 Էիր ատեն մը հողին հավասար,
 Ապա ույժ առած դուն վեր սլացար,
 Ու դեռ կնախրես գերք իսիգախ արծիվ
 Գալիք օրերուն, դարերուն անթիվ:

Հե՛յ ջան Երեւան,
 Հայ մանկան սիրտը քեզնով կլիսայտա,
 Քեզ հետ կիրնվի ջուրը Սեւանա . . .
 Իսկ սուրբ Մաշտոցը հայրական սիրով
 Ուժ կուտա հոգուդ իր սուրբ տառերով:


Հե՛յ ջան Երեւան,
 Վշտի ծով էիր, իհնդի ծով դարձար,
 Հանուր հայության հույսի ծով դարձար,
 Անույս աչքերու աչքի լույս դարձար,
 Ոտիսիդ համար սրտին փուշ դարձար:
 Հե՛յ ջան Երեւան:

«Սովետական Հայաստան», 1970

ԽՐԱԽՈՅՍ

Զօն՝

Ռ. Ա. Կ. 50րդ Պատգամաւորական Ժողովի պատգամաւորներուն



Օ՛ն, ընդառաջ իտէլապաշտ գիւնուորներ,
Գաղափարի առաքեալներ քաջասիրտ.
Ռազմիկներու սիրտերը միշտ ձեզի հետ,
Ազատական տեսիլքովը խանդավառ,
Կայծակնային արագութեամբ շարժեցէ՛ք,
Միշտ դէպի վեր, դէպի աստղերն լուսատու,
Յաղթանակի արշալոյսը վայելու:

Հինգ տասնեակ մը տարիներու ձեր ուղին
Թէպէտ դժուար, բայց անյողողող քայնցիք:
Այժմ պահն է նոր գարթօնքի, նոր կեանքի,
Պահն է նաեւ գոհողութեան, նուիրման,
Քանզի այսօր մարտանաւն մեր իտէլի
Պանդխտութեան ովկէանին մէջ փոթորկոտ
Դիմադրական իր ոյժերէն յոգնասպառ՝
Կը կարօտի թարմ ու խիզախ գերոյժի:
Ո՛վ նշմարիտ գաղափարի հերոսներ,
Եկէ՛ք, այժմ ձեռք ձեռքի տանք հոգեւին,
Փրկենք նաև մեր բոյլ աստղերով աուցուն,
Որպէսզի ան կրկին, կրկին խիզախ
Վտանգալից ալեաց դէմը ամենի.
Որպէսզի ան յաղթահարէ ձուլումի
Եւ կորստեան մեծ վիշապը անսուաղ.
Որպէսզի ան իբր փարոս մշտավառ
Լուսաւորէ հայոց ուղին դարէ դար:

«Պայքար», Սեպտեմբեր 16, 1970



«ՊԱՅՔԱՐ» ԻՆ

Պատկառելի էջերուդ մէջ ոսկեհատիկ հասկեր կան,
Արեւահամ հայ գիրերով շարադրուած տաղեր կան,
Յաներժին դէմ յար տոկալու մտածումի շիթեր կան,
Քաղաքակիրթ ազգերու մէջ անունիդ դէմ աստղեր կան,
Ամենայն տեղ քեզ ընթերցող հայադաւան աչքեր կան,
Բարունապետ մեր սիրելի, դու ուղեցոյց եզական:

ԱՐԱ ԱՐԵՒԵԱՆ

«Պայքար»

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴԸ

Զօն՝ հայ ժողովուրդին

Սէգ Արարատի երկինքին վրայ,
 Շէն ու շողշողուն աստղ յաւերժական,
 Հայկազեան տոհմի հերոս ժողովուրդ:
 Դուն ժառանգորդը Հայկ նահապետի
 Եւ Արարատի ծնունդն առաջին,
 Բերքն հարագատ:
 Դուն ջրհեղեղի անդարձ դարերու
 Անճանճիք մամբորդ:
 Պողպատեայ կուրծքդ դէմ տուած յանախ
 Անգութ, անօրէն
 Փոքորիկներու խենթ հարուածներուն,
 Բայց, չես ընկնուած,
 Այլ միշտ աննկուն ու դիւցազնական
 Վսեմ ոգիով
 Ապրեր ես, կ'ապրի՛ս,
 Եւ վսեմաշուք մակատդ բարձր
 Պարտութեան մէջ իսկ,
 Պարտութեան ոգին ռոնահարելով
 Խիզախ, անվեհեր,
 Ապրեր ես, կ'ապրիս, եւ պիտի ապրիս,
 Մերոպ Մաշտոցի յարատեւ շունչով:
 Ապրեր ես, կ'ապրիս,
 Յարատեւութեան անխախտ հաւատով,
 Ի սպառ ցոյց տարու արար աշխարհին
 Կամքդ անսասան, հոգիդ լուսեղէն
 Եւ մեծութիւնդ անատարկելի:
 Որպէս ժողովուրդ մ'աստուածաբնտիր
 Ապրեր ես, կ'ապրիս.
 Եւ ինչն՞ չապրիս
 Երբ Արարչութեան օրէնքներուն դէմ
 Ըմբոստութիւն ու անարդար միտք
 Զունեցար երբեք,
 Նոյնիսկ Եղեռնի սե՛ւ, սեւ օրերուն:
 Ապրե՛ր ես, կ'ապրիս,
 Արհամարհելով յոգնութիւն ու մահ,
 Անվերջ շինելով բոյնդ կործանած,
 Երկիրդ աւեր:
 Եւ ի՞նչ է արդէն
 Մեծ Արարիչին պատուէրը մարդոց.
 — Շինել, գարդարել աշխարհն այս ծեր,
 Աննանաչելի ու քառային:
 Եւ դուն՝ շինարար անխոնջ ժողովուրդ,
 Տառապանքով լի անթիւ դարերով,

Քրտինճիդ ոսկի լոյս կաթիլներով
 Եւ սուրբ արեանդ մատագայթներով
 Կեանք տուիր հողին.
 Հողը՝ դարձաւ տուն,
 Տունը՝ հայրենիք,
 Եւ հայրենիքը՝ դրախտ լուսատու:
 Արդ, ազատութեան նոր այգաբացին,
 Տառապանք ու մահ բու խոն բողած,
 Հանճարեղ մտքիդ ու մարտար ձեռքիդ
 Հարուածներուն տակ,
 Քարըն փշրուելով կը դառնայ դերձան,
 Նաեւ բիրաւոր նահատակներու
 Եւ անմահներու փառքի պատուանդան,
 Յուշ ու յուշարձան:
 Եւ ուստի այսօր
 Եւ յաջորդական գալիք դարերուն,
 Լուսեղէն հոգւոյն սուրբ էութեան դէմ
 Միշտ խոնարհելով
 Պիտ՝ ոգեկոչենք.
 Փա՛ռք էութեանդ ու գոյութեանդ,
 Փա՛ռք եւ բիր յարգա՛նք, հրաշք վերելիդ.
 Դուն բազմաչարչար, դուն աշխատունակ,
 Դիւցա՛զն ժողովուրդ,
 Անմա՛հ ժողովուրդ:

«Պայթար», 1971

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ողջո՛յն քեզ, երկի՛ր,
Յոյս, լոյս առա՛հող հող հայրենական,
Լոյսով սրբացած չ՛ֆնաղ Հայաստան:

Արե՛ւ, օրհնութի՛ւն, խի՛նդ, իմաստութի՛ւն
Անձրեւող երկիր,
Արեգակներու շունչով գորացած,
Վսեմ Հայրենի՛ք:

Փա՛ո՛ք արիասիրտ եւ նոնեհասակ
Քաջ որդիներուդ
— Վարդաններ վաղուան —
Որոնք գերագնիւ գէնֆերով զինուած
Յաղթականօրէն կը մագլցին վեր
Անհաս երկինքէն ֆաղելու աստղեր:

Ողջո՛յն քեզ, երկի՛ր,
Դուն՝ յաւերժական ուզմաշունչ յաղթերգ,
Հաւատք եւ աղօթք,
Քեզ հետ հայ հոգին
Պիտի գորանայ ու հգորանայ.
Քեզմով պիտ՛ ապրին տիպ ու տառն հայոց,
Որոնք քեզի հետ, քեզմէ անբաժան,
Դարեր շարունակ,
Քալեր են դէպի դառն խաչելութիւն,
Տեսեր են կրակ, տեսեր են աւեր,
Բայց եւ ամէնֆին յաղթեր են անվերջ.
Եւ արդ, գիտութեան վառ մանանչներով
Դարձեր են պայծառ, դարձեր են ուժեղ
Քան թէ բազմաբիր կայծերն աթովի:

Ողջո՛յն քեզ, երկի՛ր,
Փա՛ո՛ք նոր օրերու վեհ արծիւներուդ,
Որոնք լեռներու լոյս կատարներուն
Վեհօրէն թառած,
Եւ ամենատես աստուածներու պէս
Բիրերն իրենց
Յառած հեռաւոր այն Սուրբ Վայրերուն,
Ուր հայ հաւատքի բերդերն երբեմնի
Տանարներ խունկի, խօսքի, աղօթքի,—
Բայց հազա՛ր ափսոս
Որ այժմ անոնք թափուր, աւերակ,
Դարձեր են ահա ապաստանարան
Վատ սողուններու եւ միւսերու:

Հեռո՛ւ, հեռաւո՛ր այդ վայրերուն մէջ
 Գանկեր կան անթաղ դժբախտ գոհերու.
 Ու կան եւ կ'ապրին փրկատենչ հայեր,
 Որոնք անկասկած ի սպառ կը սպասեն
 Թէ գուցէ մի օր արծիւները քաջ
 Հգօր թռիչքով ներխուժեն պիտի
 Մեր պապենական հողերը անտէր,
 Երկիրը հայոց,
 Փրկերու ընդմիջտ
 Գերեալ հայերու հոգիները թանկ:

Ողջո՛յն քեզ, երկի՛ր,
 Յոյսի, հաւատփի սրբագան արեւ,
 Դուն՝ գարնանային շունչ անմահական,
 Մեծցի՛ր, գօրացի՛ր,
 Բայց . . . «Մեր հողերը, այն մեր հողերը» . . .
 Մշտնջենական երգը թող ըլլայ
 Քու սուրբ շրթներուդ.
 Ի սէր բիրաւոր մարտիրոսներու
 Եւ ի փառս քու անսասանութեանդ:

Հգօ՛ր Հայրենիք,
 Անյաղթ Հայրենիք:

(Երեւան, 1971)

«Պայքար», 1971

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ**ՂՕՂԱՆՋ**

Պարոյր Սեւակ,
 Դուն հայրենի շէկ արեգակ:
 Հայաստանի սէգ լեռներու
 Ու դաշտերու գետ վարարուն:
 Դուն՝ պառնասեան անխոնջ Աստուած
 Եւ հաւատքի վեհ Արագած:
 Կոմիտասի բարի հոգին
 Վերակերտող
 Զգօն բերթող:
 Անլոյլի զանգակներու
 Վսեմաշունչ ոսկի լեզուակ:
 Հինը՝ նորին, նորը՝ հինին
 Կամրջող մեծ մարտարապետ:
 Դուն՝ անթաղ լոյս ու մտազայթ
 Եւ նշմարիտ նոր առաքեալ:
 Ողջ էութեամբ Աւետարան
 Ու երգարան:
 Հայաստանի նոր օրերու
 Երկնապաղ խիզախ արծիւ,
 Եւ ոսկեհունչ անգին սոխակ
 Պարոյր Սեւակ:
 Դեռ երէկ էր
 Քսան եօթ դար Երեսնին
 Տուիր խոհեր Աղամանդեայ . . .
 Ու ոսկեճոյլ հանդերձներով
 Պննեցիր, դուռն, Երեսնի
 Էութիւնը հնադարեան:
 Բայց ավստ՛ս որ . . .
 Լուսապարգեւ արեւդ վառ
 Յանկարծօրէն խաւարեցաւ:
 Լուռ օթեակէդ, արդ դողանջէ:
 Գարուն կեանքի վառ արեւիդ
 Ու բազմալար վեհ ֆնարիդ
 Ո՞ր չար աչքն էր, չար կամեցաւ.
 Ո՞ր ոտիսն էր մակտիդ գարկաւ,
 Խոր լոռութեան կնիքը սեւ:

* * *

Հայաստանի հզօր երգիչ,
 Ոսկի խոկմանց դու արարիչ,
 Մեծութիւնդ արտայայտող
 Ի՞նչ նուէր տալ յաւերժական,

Որ քու հոգիդ, հայր՛ւ հոգիդ
 Միշտ հրնուի:
 Տաղերգութեան Աստղ ու Մշակ
 Պարոյր Սեւակ:
 Փա՛նք քու ապրած շէն օրերուդ,
 Յարգանք գրչիդ ու խոհերուդ,
 Յաւէտ հանգի՛ստ
 Հայրենանուէր անիւններուդ.
 Հայաստանի անմահ գաւակ
 Պարոյր Սեւակ:

«Պայթար», 1971

ԵՂԲԱՅՐ ԱՌ ԵՂԲՕՐ

Զկայ մարդ, որ չունենայ վիշտ.
 Վիշտոյ լման յանձնէ ինծի,
 Ես գայն քաղեմ տեղ մ'ամայի:

Հայու ունկդ պահ մ'ինծի տուր . . . ,
 Ունիմ երգեր դաշն ու վարար,
 Քեզի ձօնեմ եղբայրաբար:

Ցասկոտ սիրտդ պահ մ'ինծի տուր . . . ,
 Ի սպառ վանեմք հեռ ու նախանձ,
 Ուխտեմք ըլլալ մէկ սիրտ, մէկ անձ:

Անվոյժ հոգիդ պահ մ'ինծի տուր . . . ,
 Փոխան անոր քեզի յանձնեմ
 Հայու հոգին պերն ու վսեմ:

Հայու ձեռքերդ պահ մ'ինծի տուր . . . ,
 Մեր ձեռքերով դառնանք հօր,
 Խլեմք հողերն մեր դարաւոր:

Հայու սէրդ պահ մ'ինծի տուր . . . ,
 Որ գայն բաշխեմ ողջ հայութեան,
 Ըլլանք մէկ ազգ, յար անբաժան:

«Պայքար», 1976
 «Ապագայ», 1976

ՄԵԾ ՍԳԱԻՈՐԻՆ

*Վահե-Վահեանիին
Իր գաւկիին՝ Վահրամիին մահուան առթիւ*

Քու սիրտէդ հագիւ սուգի սեւ յուշերդ
Մեկնիլ սկսան,
Ահա վերստին քեզ այցի եկաւ
Մըրիկը մահուան:

Ո՞ր չար աստուածը գաղտնի ու անյայտ
Պարտէզդ մտաւ,
Եւ պերն ծաղիկդ ստոնասրտօրէն
Խլեց ու տարաւ:

Ովկէանի նման վիշտդ անհուն է,
Դուն վեհ բանաստեղծ.
Բարի Աստուածը թող մխիթարէ
Քու հոգիդ անեղծ:

Մենք եղբայրօրէն քեզ հետ կը սգանք
Կորուստդ անդարձ.
Ինչպէս քու սիրտդ, նոյնպէս մեր սիրտերն
Վիշտով են լեցուած:

«Պայֆար», Մարտ 30, 1976

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՂՕՂԱՆՋ

Ժամանակը ժանիֆաւոր
Կը լափէ միշտ,
Ինչ որ ծեր է, ինչ որ անպէտ
Ու անբարիշտ:

Համբայ տուր ինձ, դուն ուժասպառ
Ծեր պարտիգպան,
Որ նժոյգըս միշտ արշաւէ
Յանբժուութեան:

Համբայ տո՛ւր ինձ, լոյս աշխարհի
Լոյսը գրկած . . .
Ահա կուգամ վառ յոյսերով
Բեռնաւորուած:

Համբայ տո՛ւր ինձ, նոր օրերու
Յոյսը սրտիս . . .
Պիտ՝ դողանջեմ ողջ մարդկութեան
Նոր աւետիս:

Համբայ տո՛ւր ինձ, բերած եմ ես
Նոր ծիածան,
Ամէն խաւի, ամէն ցաւի՝
Դեղ ու դարման:

Համբայ տո՛ւր ինձ, մանուկն եմ ես
Բազմապարգեւ,
Նոր իղձերով կ'ուզեմ սուրալ
Դէպի արեւ:

Համբայ տո՛ւր ինձ, ու մութին մէջ
Թաղուէ՛, կորի՛ր,
Եւ դարերու հետքերուն տակ
Փռչիացիր:

Սակայն, կեանքէն ի՞նչ սորվեցար
Ինծի թող այդ,
Գուցէ ըլլայ ուղեւորիս
Լոյս հրացայտ:

«Պայֆար», 1976

ՀԵՐՈՍՆԵՐԸ ՉԵՆ ՄԵՌՆԻՐ

Պանծալի հերոս Ա.Ն.ԴՐԱՆԻԿԻՆ

Ազատատենչ ֆաջ մարտիկ,
Հէփիաբային սուրբ հերոս,
Մարտնչումներդ ֆաջարի
Շշմեցուց բուրբն հեթանոս:

Նուիրեցիր կեանքդ ամբողջ
Ազատ կեանքի սուրբ դատին.
Ու ազգիդ բիր վերբերուն
Եղար դարման քանկազին:



Դուն առաքեալ ու Դիւցազն,
Աստուածատուր մեծ պարգեւ,
Հայաշխարհի լեռներուն
Անխոնջ արծիւն պերնաթեւ:

Բոպէներու խոյանքէդ
Լեռներն հայոց ցնծացին.
Իսկ թշնամին վեհերոտ
Ահէն՝ դիմեց Ալլահին:

Ամէն հայու տունէն ներս
Սուրբ անունդ երգուեցաւ . . .
Ամէն հայու սրտին մէջ
Նոր մարտիկ մը արթնցաւ:

Նուիրական հայորդի,
Ազատ կեանքի ախոյեան,
Հազար դարեր թէ շիջին,
Դուն պիտ' ապրիս յաւիտեան:

Իցի՛ւ երկնի ոստանէդ
Ջոյգ աչքերդ սրատես
Պահ մ'հանդիպին մեր երկրին,
Ուր կեանքն է արդ մեծ հանդէս:

Կայծակնաբափ վեհ հերոս,
Քաջերու ֆաջ Անդրանիկ:
Դիւցազնութեան քազակիր
Յաւերժափայլ Անդրանիկ:

«Պայֆար», 1976

*Վերոգրեալ էրթուածին ուր տուներու առաջին տողին առաջին տատերն իրարու
բով շարելով կը կարդացուի՝ Ա.Ն.ԴՐԱՆԻԿ:*

ՏԱՐԱԲԱԽՏ ԱԼԵՒՈՐՆԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ

Դուք երբեմնի գողտր ու չքնաղ ծաղիկներ . . .

Այժմ քառամած.

Կարծես թե՛ ձեր մէջ խենթ մահը կ'իշխէ,

Մահը անաստուած:

Ձեռքեր դողդոջուն, աչքեր նուաղուն,

Ծեր վիշտին անվարժ

Ձեր խեթ նայուածքով կ'անիծէք կարծես

Կեանքը յարաշարժ:

Խոկումները ձեր, անգոյն, անկայուն,

Թոյլ ու յուսաբեկ,

Մերք կը քափառին անել կածաններ

Անաղօթ, աներգ:

Չար ամպն է ծածկեր ձեր արեւը հէք,

Դեռ մայր չըմտած . . .

Եւ ձեր արտերուն պատեր է սմեռն

Անկրակ, անկայծ:

Ձեր բախտն է դաժան: Իսկ չէ՞ որ քաղցր է

Կեանքը սրբագան.

Ուստի կը յուսաք ապրելով յաղթել

Մահին անասան:

Պիտակ գուխներ, ձեր էութեան մէջ

Արեւն է սատեր,

Ու ձեր նրագին վերջին բոցին հետ

Պատրոյգն է հատեր:

Թօշնած ծաղիկներ, ծաղիկներ յոգնած,

Վաղուց է ձեզ հետ սեւ մահը կ'ապրի:

Բայց դուք կ'ընդձայն որ ողորմածն Աստուած

Իջնէ երկինքէն, ձեզ դրախտ տանի:

«Պայքար», Մարտ 15, 1977

ՄՏՔԻ ԾՓԱՆՔՆԵՐ

Մնացե՛ք բարով տարերք ու աշխարհ,
Դու՛ք որ զլացա՛ք ճնճու՛շ մի ճնար . . .
Եւ իմաստութեան աստղ մը լուսատու
Ձեր այս գերեալին հոգւոյն անլեզու . . .

Աշխարհն է կարծես մեծ հրապարակ,
Ուր մարդիկ կ'որսան յաղթանակ ու թագ,
Եւ եղբայրն եղբօր ինչքին նախանձող,
Եւ բոյրը բրոջ մեղաց աններող:

Միքէ մարդը չէ՞ դիպուածի ծնունդ,
Որ կարն կեանքէ ետք կը նետուի անդունդ.
Կա՞յ արդեօք վայր մը, աշխարհ մ'անծանօթ,
Ուր չկան ցաւեր, խաչ ու խոչընդոտ:

Պատկերն Աստուծոյ տրուեցաւ մարդուն . . .
Բայց մարդը մերժեց ապրիլ յար նկուն,
Այլ ուզեց ինքն ալ մասնակից ըլլալ
Իր ստեղծողին մեծ մտքին գուլալ:

Բայց, աւա՛ղ, ինչ որ այգուն կը ծնի,
Նոյն մայրամուտին մահուան կը յանգի . . .
Այսպէս է կեանքը ունայն աշխարհի,
Որուն օրէնքն է օրէնք տաղտկալի:

«Պաշար», Օգոստոս 31, 1977

Կ'ԸՂՁԱՅԻ ԵՍ ԱԼ . . .

Կ'ըղձայի ես ալ ըլլալ մի երգիչ . . .
Ու երգել երգեր ընտիր ու թովիչ.
Դեռ երգս չծնած՝ փոթորիկ մ'առնեղ
Թաղեց ամէն յոյս ու երգերս անմեղ,

Ու հոգւոյս կրակն դարձաւ սեւ մոխիր . . .
Բայց, գգո՛յշ, անցո՛րդ, անոր մի՛ դպչիր,
Գիտցիր մէն մոխիր թափուն կայծ մ'ունի,
Ինչպէս երկինքը՝ թիւր աստղեր գաղտնի:

Անցո՛րդ, մի՛ դպչիր մոխիրին այդ տափ,
Գուցէ հրահրի, դառնայ շէկ կրակ,
Եւ հուր կայծերէն, կայծ մը հրավառ
Թռչի՛, հրդեհէ՛ հոգիս ճնճալար:

«Պաշար», 1977

ԳԱՂԹՈՂ ԿՌՈՒՆԿՆԵՐՈՒՆ

Վեց հարիւր տարի դաժան գերութիւն,
 Վեց հարիւր տարի թափեցիմք արիւն,
 Վեց հարիւր տարի անվերջ տֆնեցանք,
 Որ հայն ունենայ հանգիստ, ազատ կեանք:
 Այժմ որ ունինք հող ու հայրենիք,
 Ա՛յս, դուք կոռունկներ, ինչո՞ւ կը փախչիք:

Ո՞ւր է կը չուէք, գաղթող կոռունկներ,
 Ձեր ետեւ թողած ձեր բոյներն աներ,
 Ո՛հ զգաստացէ՛ք, անցած է ձմեռ,
 Գարո՛ւն է արդէն, գարո՛ւն բարեբեր:
 Այժմէն գիտցէք թէ հայրենի հողին
 Պարտական ենք հուր, սէր սրտագին:

Նահատակներ մեր որոնք զոհուեցան,
 Թողուցին մեզի հող յանրժական.
 Քանի որ ունինք հող ու հայրենիք,
 Ա՛յս, դուք կոռունկներ, հոնկէ մի՛ փախչիք.
 Հայրենասէրի պարտքն է իմաստուն
 Նուիրել հողին քրտինք ու արիւն:

Թէ որ հայ հողին պիտ' չըլլանք պաշտպան,
 Ու պիտ' զանանք մեր քիրտն ու արիւն.
 Եւ պիտի գաղթենք, ըլլանք գաղթական,
 Ա՛յ ի գուր չէ՞ր որ թափեցիմք արիւն.
 Չէ՞ որ ա՛լ մերն է հողն այդ սրբագան,
 Ամօք չէ՞ գաղթենք, կոչուինք *գաղթական*:

«Պայքար», 1977

ԵՐԳ ՅԱՂԹԱՆԱԿԻ

Բիւր կոչնակներ թող հնչեն,
 Այսօր տօն է ու գատիկ.
 Հայաստանի լեռներէն
 Մէն մի արծիւ ու ռազմիկ
 Ջուարթ երգեր թող երգեն,
 Այսօր տօն է ու գատիկ:

Աշխատունակ ազգ իմ վեհ,
 Բագուկներովդ սուրբ ու ժիր,
 Միշտ ֆանդակէ՛, ֆանդակէ՛

Քու հարագատ մակտիդ գիր,
Որ ամէն մարդ յար օրհնէ
Բագուկներդ սուրբ ու ժիր:

Հետքդ ջնջել փորձեցին
Յելուգակներ բիրաւոր.
Իսկ դուն կառչած մեծ լոյսին
Ստեղծեցիր ուղիդ նոր:
Արդ, պահն է որ խոնարհին
Թշնամիներդ նենգաւոր:

Քանզի, արդ, վեհ յաղթական
Հեշտ արեւի մը նման,
Հառագայթներդ եզական
Կը բաշխես ողջ աշխարհին,
Արդ, պահն է որ քու դաժան
Թշնամիներդ խոնարհին:

Թող արեւը երկինքիդ
Յաւէտ մնայ անարատ,
Թող ոյժ ըլլայ քիկունքիդ
Երկնամերձն Արարատ.
Թող վերանան ամէն խիթ
Քու հոգիէդ անարատ:

Շէն եւ ուրախ մնաս միշտ
Արեւադէմ Հայաստան.
Թող անհետին ցաւ ու վիշտ . . .
Ու թող ծոցէդ հեռանան
Թուխ ամպերը ամբարիշտ,
Կենդանարար Հայաստան:

Բիր կոչնակներ թող հնչեն,
Այսօր տօն է ու գատիկ.
Հայաստանի լեռներէն
Մէն մի արծիւ ու ռազմիկ
Զուարթ երգեր թող երգեն,
Այսօր տօն է ու գատիկ:

«Պայթար», 1977

ԳՈՒՐԵԱՆԻ ՈԳԻՈՎ

Երուանդ Ազատեանիին

Ո՞վ էր, ո՞վ էր այս պատանին,
 Երկրի ծնունդ, թէ երկնի աստղ,
 Որ տիրացաւ բոլոր արեւին
 Եւ երկինքի գանձերուն մոխ,
 Ու տուաւ շատ սրտի երգեր,
 Մինչ ինք ունէր անհուն վերքեր:
 Պատանին այս հանճարամիտ
 Ունէր շնորհք ու բարի սիրտ,
 Երբ մահուան դէմ կը պայքարէր
 Ու կը տանջուէր իր հոգին մեծ,
 Անգութ բախտին դէմ գայրացած
 Հայեց երկինք եւ առ Աստուած
 Իր «Տրտունջ»ը շարադրեց
 Եւ քանդակեց խօսքն իր վսեմ.
 «Եթէ հրնչէ տրխուր կոչնակ,
 Թրքոուն ծիծաղն մահու դժխեմ,
 Դագաղս առնէ իր համր քայլ,
 Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ»:

«Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ»,
 Ահա երգն իր անմահական,
 Որ պատանին երգեց խանդով:
 Հոգիներ կան ունին թեւեր
 Թէ՛ մարմնեղէն, թէ լուսեղէն.
 Անոր հոգին բանաստեղծի
 Որպէս աստղ մը յաւերժափայլ
 Գնաց երկինք, ուրկէ կ'երգէ.
 «Եթէ մարդիկն այն մահերգակ,
 Որք սեւ ունին ու խոժոռ դէմ,
 Համասփոեն խունկ ու աղօթք,
 Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ»:

Դար մ'է անցեր այդ օրերէն,
 Բայց երգերն իր որպէս կոչնակ
 Աստղերու հետ շունչ կը մաղեն
 Եւ քաղցրալուր կը դողանջեն.
 «Գիտցէ՛ք որ դեռ» կ'ապրի Դուրեան,
 Ձի ան աստղ մ'է յաւերժական:

«Պայքար», Մարտ 1, 1978

ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Մտֆիս քասով լոյս կը խմեմ,
 Լոյսը կեանքի ու գիտութեան,
 Որ չըմեկնած գայն նուիրեմ
 Այս աշխարհի ողջ մարդկութեան:

Ես ձկնորս եմ կարքս նետած
 Լոյս երկինքին լայնատարած,
 Յուսամ բռնել աստղ մը անանց
 Որ գայն կապեմ կեանքիս՝ գերք գանձ:

Ես որսորդ եմ, որ կ'որոնեմ
 Պատերազմի չար սատանան,
 Կ'երդնում Աստուած քէ որ գտնեմ
 Պիտի փշոբեմ գանկն իր ունայն:

Ուստի քոյլ տուր Տէր երկնաւոր
 Խմել կեանքի լոյս աղբիւրէն,
 Օգնէ ինծի որ ամէն օր
 Քաղեմ աստղերն ազատօրէն . . .

Ու տամ գանձնի ամէն անոնց
 Որոնք չունին լոյս ու ամբոց,
 Ու կեանքի մէջ ունեցած չեն
 Ո՛չ յոյս, ո՛չ լոյս, ոչ ապաւէն:

«Պայքար», 1978
 «Ապագայ», 1978

ՄԱՆԿԱՆ ՄԸ ԱՂՕԹՔԸ

ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ ԴՊՐՈՑԷՆ ՆԵՐՍ

(Պէյրուք, Լիբանան)

Մահացու գէնֆեր, կապար ու կրակ,^(*)
 Հրթիռներ անսիրտ, անաչք ու վայրի
 Աւա՛ղ, քանդեր են պալատ ու տնակ
 Ու վարժարանը — մեր տանա՛րն լռյսի:

Աստուած իմ, մարդիկ ինչո՞ւ ա՛յսփան ոխ
 Ու թռչն են ամբարած իրենց գանկին մէջ,
 Եւ գերթ անմիտներ կ'ընեն ոտնակոխի
 Ամէն սրբութիւնք եւ աստղեր անշէջ:

Մամիկ մը ահա, խոր վերքը սրտին,
 Աչքերն յառած արդար երկինքին,
 Հացի ու ջուրի կարօտ շրթներով
 Կ'աղօթէ առ Տէրն հայու հաւատով:

Քիչ անդին ինկած անոտ ու անթեւ
 Եղբայրս, որ դեռ ունի կեանք, արեւ,
 Բայց տառապանքը յոյժ անտանելի
 Կը գերէ հոգին եւ սիրտը բարի:

Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, ողորմա՛ծ Աստուած,
 Հայ տառապանքին իրագեկ Աստուած,
 Անտուն ու թշուառ եւ հալածական
 Հայ բեկորներուն հասիր օգնութեան:

Պահէ, պահպանէ ամէն սուրբ մեհեան,
 Եւ դպրոցը մեր — գիտութեան խորան.
 Թէ որ չլինին գիրք ու վարժարան,
 Մեր հոգիները անան կը մնան:

Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, ողորմա՛ծ Աստուած,
 Հայ տառապանքին իրագեկ Աստուած,
 Պահէ՛, պահպանէ՛ ամէն սուրբ մեհեան,
 Եւ դպրոցը մեր — գիտութեան խորան:

«Պայֆար», Յունուար 25, 1979

^(*) Կ'ակնարկուի Լիբանանի քաղաքացիական պատերազմին՝ 1975–1992:

Ա՛խ, ԱՅՍ ԿԵԱՆՔԸ

Ա՛խ, այս կեանքը, դառն ու անուշ,
 Որ մե՛րք վարդ է եւ մերք ալ փուշ,
 Ստուերի պէս ցնդի՞ պիտի
 Շոյելով լոկ սիրտ ու հոգի:

Թէ որ կեանքը անցնի պիտի
 Ու մեր յուշերն դառնան շոգի . . .
 Թէ պիտ՛ չապրինք այս կեանքէն վերջ
 Որպէս աստղեր չճնաղ ու պերն . . .

Թէ եկած ենք աշխարհն այս խեւ
 Փշրուելու որպէս տերեւ . . .
 Արդ, պահն է որ բարին Աստուած
 Զնջէ օրէնքն այս օրեկցած . . . :

Կ՛ուզէի որ այս կեանքէն վերջ
 Համբու ծայրին բար մը ըլլամ,
 Որ բանուորներ հանդարտ սրտով
 Նստին, պահ մը հանգստանան . . .

Կամ ծաղիկ մը գարնանային,
 Զարդարելու կուրծքն հերոսին,
 Կամ աստղ մը ջերմ, ցուրտ գիշերին
 Մեղմելու գէթ վիշտն աղբատին:

«Ապագայ», Ապրիլ 7, 1979

ՏԵՐԵԻԱԹԱՓ

Աշուն է.
Եւ ծառերը մերկ, հիւանդ, ուժասպառ,
Կ'ըղձան մրափել հանգիստի համար:

Աշուն է.
Գօսացած ծառերն կը դողան, կ'ողբան,
Երբ տերեւները կ'իջնեն գերեզման:

Աշուն է.
Քամին կը սուլէ փողով, սրինգով,
Թափուած տերեւներն կը պարեն գինով:

Աշուն է.
Տենդոտ արեւը մեզմէ հեռացած,
Իր վիշտն է տարեր վերեւ, առ Աստուած:

Աշուն է.
Լեռներու վրայ բոթարեր ճիւղ կայ,
Սառած կ'երեւին յոյս ու ապագայ:

Աշուն է.
Եղնորդ մ'է ինկեր դունչն արիւնլուայ,
Վերեւ իր մայրը շուարած կուլայ:

Աշուն է.
Ցրտաշունչ աշուն, եւ տերեւաքափ,
Տեսիլք մահասփիւռ, որ կ'առթէ սարսափ:

Աշուն է . . .
Սակայն գարուններ պիտի գան կրկին
Եւ հմայաքափ ծառերն պիտ' ծաղկին,
Ու մարդիկ պիտի փարին վեհ գործի,
Որ կեանքը նորէն խինդով ողողուի:

«Պայքար», 1979

ԳՈՎՔ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

Կը հաւատամ քու փրկարար գորութեանդ,
Ո՛վ երկնատուր հայ լեզու.
Դուն՝ մեր գէ՛նքը, մեր դրօ՛շը պանծալի,
Որ ծնած է ապրելու:

Գիշերուան մէջ աստղերուն հետ կը փայլիս,
Լուսաբացին գերք արեւ.
Հայ սրտերու բերդերէն ներս կենսատու
Լոյս կը բաշխես յարատեւ:

Հայ հոգիին կենդանութիւն շնորհող,
Ո՛վ սրբութիւն, սո՛ւրբ էակ.
Հայ մանկիկը քու շունչովդ յար կ'ապրի
Սէրդ սրտին մէջ գերք սուտակ:

Յաւերժօրէն քու լոյսիդ հետ շողկապուած
Պիտի փայնմբ միշտ յառաջ,
Հանուր ազգաց՝ լոյսէդ նշխար բաշխելով
Պիտի ապրիմբ աննրան:

Քու գոյութեամբ հայու հոգին գորացաւ
Եւ արուեստի խորանէն վեր բարձրացաւ
Ու աւետեց. պիտի ապրիմբ, պիտ' տեւեմբ,
Որ հայ լեզուով ողջ աշխարհը զարդարեմբ:

«Պայֆար», 1979

ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆԻՆ

Մշտանանանչ ու մշտարթուն
Ազատութեան տեսիլք ես դուն,
Ազգիդ համար նահատակուած
Քաջերու էն փաջն եղար դուն:

Զար քշնամուն գորք ու բանակ
Արհամարհող Հայն եղար դուն,
Ու դարերով Հայ փաջերուն
Ներշնչումի աստղն եղար դուն:

Քաջակոբով մեծ հայորդի,
Պարծանք տոհմիդ ու հայութեան:
Արդ մեմբ կուգանք մատուցանել
Յիշատակիդ՝ յաւէտ յարգանք:

«Պայֆար», 1980

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԻՄ ԱՂՕԹՔՍ

Արդարասէր, խաչեալ Փրկիչ,
Գողգոթայի խաչդ տո՛ւր ինձ.
Թող ես կրեմ ու տառապիմ,
Որպէս եղբայր ու սրտակից:

Ծնած օրէս խոցուած սրտով
Թափառեցայ արար աշխարհ,
Տեսայ մարդիկ կոյր, հաշմանդամ
Եւ բիւր մայրեր հէ՛ք, վշտահար:

Ո՛յժ տուր ինձ Տէր, որ աշխարհէն
Յաւէտ ջնջեմ հեռ, ոյս, քախիծ,
Որ մարդն ապրի եւ օրհնէ միշտ
Քու սրբացեալ կեանքդ անբիծ:

«Պաշար», 1980

ԻՆՔՆԱԽՈՀՈՒԹԻՒՆ

Իմ արարիչ, իմ Աստուած, հոգին որ տուիր ինձի
Զայն կը յանձնեմ հովերուն, թող հովերը կատաղի
Գրկեն, տանին շա՛տ հեռուն մօտն արեւին կամ լուսնին,
Կամ շողկապեն առ յաւէտ երկնքի վառ աստղերուն:

Գուցէ մէջն աստղերուն ապրի, տեւ ու շողայ,
Եւ հեռաւոր երկինքէն իր շողերէն կայծեր տայ
Այս ծերացած ու յոգնած յար մթաստուներ աշխարհին:
Բայց կայծերէն թող ո՛չ ոք վնասուի ու տառապի . . .

Իր կայծերէն փանափի հիւլէ մ'անգամ չխամրի . . .
Այլ շնորհուի օրհնութիւն եւ ընծայուի խաղաղ լոյս
Ամէն անձի ու սրտի: Ահա իդձերս ո՛վ Տէր,
Որ կը յղեմ առ երկինք: Սակայն թող կամֆդ ըլլայ:

Թէ կը կամիս որ հոգիս չբաժնուի պատեանէն,
Շունչ տուր հասնիմ հովերուն, խլեմ հոգիս բերեմ տուն
Եւ պահիկ մ'ալ վանդակեմ, մինչեւ որ կոչդ լսեմ,
Մինչեւ որ ըլլամ պատրաստ աստղերուն մէջ ապրելու:

«Պաշար», 1981

ՈՂՋՈ՛ՅՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ

Ողջո՛յն քեզ, Մարիամ, ո՛վ Աստուածամայր,
 Աղբիւր գթութեան, դուն մայր սրբուհի,
 Պատկերիդ դիմաց կանգնած մեկուսի
 Անարատ սրտով կը դիմեմ քեզի:
 Որդիդ խաչուեցաւ փրկելու համար
 Հոգիներն մարդոց եւ արար աշխարհ:
 Ի գուր չէ՞ր միթէ, քանի որ այսօր
 Մարդիկ կատաղած, մարդիկ բռնաւոր,
 Անվերջ կը գործեն մեղքեր ահաւոր:
 Տե՛ս, եղբայրն եղբօր կը դաւաճանէ,
 Մինչդեռ ըսուած է՝ «Թշնամիդ սիրէ»:

Ողջո՛յն քեզ, Մարիամ, ո՛վ Աստուածամայր,
 Մարդիկ կ'ապրին հոս ու կը պայքարին
 Տիրելու համար սրբազան հացին:
 Անթիւ բերաններ խոր ու լայնաբաց
 Կուլան, կ'աղերսեն պատառիկ մը հաց:
 Թէպէտ ըսուած է՝ «Միայն հացով չէ
 Որ մարդը կ'ապրի, կը գոյատեւէ»:
 Քաղցածին համար նախ հաց եւ ապա
 Երկնային շնորհք եւ լոյս ապագայ:
 Ըսէ՛ Արարչին, մարդը ընչասէր,
 Կոպիտ դարերէն դեռ չէ հեռացեր:

Ողջո՛յն քեզ, Մարիամ, ո՛վ Աստուածամայր,
 Շատ դարեր առաջ Որդիդ խոստացաւ
 Կրկին գալ աշխարհ, բառնալ վիշտ ու ցաւ,
 Աշխարհ կը սպասէ այդ հրաշք ժամին,
 Հաղորդէ որդւոյդ, մա՛յր փրկիչածին:
 Այժմ թոյլ տուր որ նգովեմ ընդմիշտ
 Բոլոր այն տարրերք որ կը սփռեն վիշտ.
 Աղբիւր գթութեան, դուն մայր սրբուհի,
 Անարատ սրտով կը դիմեմ քեզի,
 Խնդրէ Աստուծմէ որ միտքը մարդուն
 Յղկէ անգամ մ'ալ որ վերափոխուի,
 Դառնայ լոյսէ սիւն:

«Պայքար», 1981



Գերսամ Ահարոնեան

ԴԱՐԲՆՈՂ ՄՏՔԻՆ

Գերսամ Ահարոնեանի յիշատակին

Ազնի՛ւ ընկեր, երբ մանուկը կը ծնի,
Կ'երազէ միշտ օր մը հասնիլ աստղերուն . . .
Դուն դարբնող միտք, յար տփնեցար գերք դարբին
Որ ողջ մտփիդ կայծերն ըլլան նոյս, խոհուն:

Չարն ու բարին եւ նիշդ ուղին ցոյց տուիր
Ամէն անոնց՝ որոնց հոգին կը մերժէր
Տեսնել լոյսը որ կը մաղուէր երկինքէն.
Նաեւ անոնց՝ որ կ'ապրէին անտարբեր:

Բայց աւա՛ղ որ կեանքն ունի մայրամուտ,
Եւ շնչողներ դժբախտ օր մը անխտիր
Պարտին մեկնիլ՝ միանալու Արարչին . . .
Դուն ուղղամիտ քաջ նաւապետ, արդ հանգչի՛ր:

Մենք պիտ' յիշենք, պիտ' աղօթենք, պիտ' սերտենք
Քու վաստակիդ վառ աստղերը բազմանոյս.
Եւ խոկմանցդ ջինջ աղբիւրէն պիտ' խմենք
Վսեմաշունչ խորհուրդներդ յար աննենք:

Քեզ չենք մոռնար, քա՛ջ նաւապետ, այլ յաւէտ
Պիտ' տանք յարգանք քու վաստակիդ ու կեանքիդ:

«Պայքար», 1981

ՋԱՅՆ ՄԸ ԱՆԴԵՆԱԿԱՆԷՆ

Խոր ակնածանքով Ուիլիլմ Սարոյեանի յիշատակին

Բրիչիս հետ գանկ մը — գօս ու անկրակ —
 Երբ դուրս եկաւ իր խոր փոսէն ամրափակ,
 Ուզեց յայտնել կարծիքն իր բանաւոր
 Եւ շեփորեց՝ «Լո՛յս աշխարհ, լո՛յս փառաւոր:

Ի՛նչ վեհաշունչ աշխարհ մ'ունիք, ապրողներ,
 Մի՞թէ կոյր էք որ լոյսն արդար չէք տեսներ.
 Եւ գերք որդեր, որդեր գճուճ, որդեր հէք,
 Տիւ ու գիշեր կոռուով գիրար կը սպառէք:

Լաւ իմացէք դուք ալ ինձ պէս օր մը սեւ
 Պիտ' ննջէք հոս, ըլլաք հաննար, ըլլաք խեւ.
 Բուռ մը հողն է որ ձեր սիրտը պիտ' գրկէ
 Այն սիրտը որ արեւ խնդրեց Աստուծմէ:

Ողջութեանս գիս կոչեցին՝ «Իմացող»,
 Դիս որ դրին փոսը, ըսին «դարձիր հող»,
 Բայց ո՛վ գարմանք, ամէն դամբան վէմ մ'ունի
 Կարծես այդ է կեանքն իրենց ապառնի:

Ո՛վ ապրողներ, փառատենչ ու խօլ մարդիկ,
 Շքեղ քարով չէ որ պիտի փառք շահիք,
 Այլ ձեր սրտէն երբ սէր բաշխէք խեղներուն
 Կ'ունենաք դուք յաւերժական վեհ անուն:

Ըսուած է թէ՛ շա՛տ դարերով մարդիկ սին,
 Հոգին իրենց գոհեր են փուն արծաթին
 Եւ մդեր են խօլ պայքարներ իրար դէմ,
 Մոռնալով միշտ տրուած պատուէրն երկինքէն:

Հրաշակերտ էակներ էք, աստղեր բիւր,
 Ունիք շնորհք, եւ երկնող միտք թափափուր.
 Թէ ունենաք ատակութիւնն զսպելու
 Ոխ ու կռիւ, ա՛հ, այն ատեն կ'ըլլաք դուք
 Արժանիներ յաւիտեանս ապրելու:»

«Պայքար», 1981

ՔՆԱՐԻՍ ՀԵՏ

Եկո՛ւր, քնար . . .
Սիրտ սրտի տանք շրջինք աշխարհ
Եւ անդադար
Բաշխենք արեւ եւ լոյս արդար:

Եկո՛ւր, քնար . . .
Փնտռենք սիրտ մը, սի՛րտ մը խոնարհ
Ու վշտահար
Որ կ'ապրի ան յար աննշմար:

Տե՛ս, իմ քնար . . .
Հիւզ մը ահա, ուր դալկահար
Մայր մը տիպար
Լոյս կը խնդրէ սրտին համար:

Եկո՛ւր, քնար . . .
Այդ էակին տանք լուսավառ
Աստղ ու նշխար
Եւ տնակին նրագ մ'անմար:

Տե՛ս, իմ քնար . . .
Անբախտ, անկար ծերուկ մ'ահա
Կէս սովահար
Որ երկինքէն յոյս կը մուրայ:

Եկո՛ւր, քնար . . .
Յոյս տանք, լոյս տանք այդ էակին
Եւ ջնջենք յար
Վիշտը խեղճին ու քշուտին:

«Պայքար», 1981

ԱՆՎԵՀԵՐ ՆԱԻԱՎԱՐԻՆ

Խիզախ, անխոնջ նաւավար,
 Նաւարկէ՛ դուն անդադար
 Կեանքի ծովուն վրայ անլոյծ,
 Ի՛նչ փոյթ թէ ան է ընդմիջտ
 Փոքորկայոյգ, խելագար:
 Քանի ունիս պողպատեայ
 Բագուկ, հոգի անվեհեր,
 Քանդէ՛ իսկոյն բրգացած
 Ջրաթումբերն վիթխարի,
 Թող քիերդ արծաթեայ
 Յաւերժօրէն մարտնչին
 Անվերջացող պեաց դէմ,
 Յաղթանակին ի խնդիր:
 Տե՛ս ո՛րքան մօտ է կղզին,
 Դրախտի հանգոյն գեղեցիկ,
 Ուր կան վարդեր խնդութեան
 Եւ ուր պիտի ստանաս
 Երջանկութիւն յաւտեան:
 Մի՛ վիատիր, նաւավա՛ր,
 Փարէ՛ ոյժիդ առնական,
 Որպէս էակ քաջարի
 Թիավարէ՛ անասան:
 Ի՛նչ փոյթ թէ ծովն ամեհի
 Յանախ քեզի սպառնայ,
 Իր թակարդով գագրելի:
 Ո՛վ դուն, անխոնջ նաւավար,
 Թիավարէ՛ անդադար,
 Կառչած յոյսին ու լոյսին,
 Եւ ոյժերուդ անսպառ:
 Թիավարէ՛ բանաւոր,
 Խիզախ էակ երկրաւոր,
 Մինչեւ հասնիս օր մը մեծ
 Երկնապարգեւ կայանին,
 Ուր քեզ պիտի ողջունեն
 Յաւերժութեան, յաղթութեան
 Դափնի, պսակ գեղակերտ:

«Պայթար», 1981

ՊԻՏԻ ԱՊՐԻՍ

Հայրենաշէն Հայկի թռուներ,
Դուք պահակներն հայկազեան.
Արդ, որպէս ազգ անանցական
Ունիք դրօշ պետական:

Դեռ երէկ էր. լայն վերքերէդ
Կարմիր արիւն կը թորէր.
Ցաւդ լուրջ էր, գոհերդ՝ շատ,
Սիրտդ ունէր բիր խոցեր:

Շատ դարերով անխիղն ազգեր
Բիրապատիկ փորձեցին
Ջնջել հետքդ այս աշխարհէն
Ու քեզ անվերջ խաչեցին:

Խաչին վրայ ուխտեցիր դուն
Ապրիլ, տեւել անասան,
Ու գերք փինիկ՝ մոխիրներէն
Վեր բարձրացար յաղթական:

Ազգ փառապանձ, պիտի ապրի՛ս
Եւ արդարեւ գերք արեւ
Լոյս պիտ՝ բաշխես ողջ աշխարհին,
Լոյս կենսատու, բազմաձեւ:

«Պայքար», Ապրիլ 24, 1982

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼԸ

Եւ Առաքեալը իր գրիչը պերն
 Թաթխեց երկինքի կոյս կապոյտին մէջ.
 Ապա ոսկեգոյն արեւէն առաւ
 Բիւր մտազայթներ անմահ ու անցաւ:
 Եւ գոյները նուրբ լաւ ընդելուզեց
 Եւ իր մակատին խորունկ քանդակեց . . .
 «Մարդ արարածներ աղփատ թէ փարթամ,
 Խաղաղութիւնն է երկնային պատգամ,
 Ով որ Աստուծոյ շունչովը կ'ապրի,
 Կը պարտի գապել տենչն իր կատաղի»:
 Եւ Առաքեալը շրջեցաւ աշխարհ,
 Եւ Առաքեալը վսեմ ու արդար
 Անընդհատ երգեց սէր, խաղաղութիւն,
 Որ չըվատնուի մարդկային արիւն:
 «Մարդ արարածներ աղփատ թէ փարթամ,
 Խաղաղութիւնն է երկնային պատգամ»,
 Գրեց ու երգեց որ հագար տարի,
 Ոչ մէկ պարմանի արիւնը թափի,
 Որ մեր աշխարհի մայրերը կրկին
 Կսկիծ չունենան, սեւեր չըհագնին:
 Բայց մարդը կարծես յաւէտ նիւթապաշտ
 Եւ իր ոգիով անառակ անհաշտ,
 Զըլսեց խօսքը վեհ Առաքեալին
 Եւ տապալեցաւ կառչած սին նիւթին:

«Պայքար», 1982

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Շենշող երկիր, դուն սուրբ երկիր . . .
 Դեռ պատանի . . . ու որք տղայ,
 Այրող սերդ սրտիս վրայ,
 Քեզ երգեցի խանդավառուած
 Չար ձեռքերէ նոր ազատուած:

Շենշող երկիր, դուն սուրբ երկիր . . .
 Շատ մութ դարեր պարեցար դուն . . .
 Սակայն գերք ջահ մը պսպղուն
 Եւ գերք աստղ մը յաւերժական
 Լոյս բաշխեցիր ասպնջական:

Շենշող երկիր, դուն սուրբ երկիր . . .
 Յոյսի երկիր, լոյսի երկիր,
 Ազատ կեանքի յար ջահակիր.
 Վազարշան հերոսական
 Քեզ կը տանի յաւերժութեան:

Շենշող երկիր, դուն սուրբ երկիր . . .
 Որոնելով հոգեկան լոյս
 Տուիր մեզի կենաց վառ յոյս.
 Արդ մենք բեզմով լուսաւորուած
 Կ'երգենք երթըդ վեհ, յաղթապանծ:

«Պայխար», 1982

ԱՆԻՄԱՆԱԼԻՆ

Ո՛վ վեհ գիտութիւն,
 Ո՛վ դուն, սուրբ տաճար,
 Արեւը կեանքիս
 Կառքիդ կապեցի
 Եւ լուռ, անշշունջ,
 Միշտ երագեցի
 Աղբիւրը լռյսի:

Այն աղբիւրը որ
 Պիտ՝ տար պատասխան
 Կեանքի գոյառման
 Եւ անէացման:

Սակայն, կ'իմանամ
 Արձագանձ մը լոկ
 Որ կը շեփորէ.
 «Հանդարտէ՛, ո՛վ մարդ,
 Մի՛ մտահոգուիր,
 Տառապանք ու վիշտ
 Պիտ՝ ունենաս միշտ.
 Ուստի եղիր քաջ
 Քալէ ձախ ու աջ
 Կեանքիդ սկիզբէն
 Մինչեւ գերեզման»:

«Պաշար», 1982

ԱԼԵԻՈՅԹ

Ալեւոյթի անտառին մէջ
 Լոյս որոնող կոյրին նման
 Կ'որոնեմ ես աստղս անշէջ
 Որ հեռացաւ անցեալ գարնան
 Եւ ինձ թողուց շունչը աշնան:

Ալեւոյթի խոր անտառէն
 Ժիր յենակ մը ես ընտրեցի,
 Անով միայն կեանքի ճամբէն
 Կրնամ քալել առանց վախի,
 Քանզի հոգիս յենակ չունի:

«Պաշար», 1983

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Շահան Նաթալիին

Շունչ մը անյայտ, շունչ մը հզոր
 Հրէշ մ'անգութ, դեւ մ'ահաւոր.
 Մութին մէջէն կուգայ յանկարծ
 Եւ կը խլէ ու կը տանի
 Ինչ որ Աստուած մեզ է տուած
 Արեւ ու լոյս, շունչ պիտանի:

Վեհապետն է սեւ խաւարին
 Ու կրող մը որ առանձին
 Ողջ տարեբքը լոյս աշխարհի
 Յար կը քաշէ ու կը տանի:
 Իր չարաղէտ գիծ օրէնքին
 Բոլոր տարեբք կը խոնարհին:

Զար շունչ մ'անյայտ, շունչ մը հզոր
 Հրէշ մ'անգութ ու քեւաւոր
 Զերք փոքորիկ մը մահաշունչ
 Կուգայ ընդոստ ու կը ցանէ
 Վիշտ ու կսկիծ, լաց ու տրտունջ,
 Եւ յար ազատ կը քեւածէ:

«Պայքար», Ապրիլ 23, 1983

ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻ

Հող հայրենի, հող սրբազան
 Հայ արիւնով սրբացած հող,
 Հող թանկագին
 Իցիւ օր մը գերթ արեւծագ
 — Լոյս սրբազան —
 Լոյս ընծայես ուր որ անյոյս
 Տարաբախտ հայ պանդուխտներ կան,
 Որ անձկագին
 Քեզ կը նային:

Հող հայրենի, հող օրհնալիր,
 Հայ արիւնով փրկուած երկիր,
 Հող լուսատու.
 Փառք, հագա՛ր փառք
 Գիտաշխատող գաւակներուդ
 Որ ընդերքէն լոյս կը փամեն
 Ու կը բաշխեն եղբայրաբար
 Ողջ մարդկութեան:
 Արդ՝ քու կարչնեղ ու հաստարուն
 Հերոսական գաւակներուդ
 Սուրբ գործերուն
 Յաւետ յարգանք:

«Պայքար», 1983

ԽՕՍՔ՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ

Ճիշդ է որ մենք տառապեցանք,
 Բայց տոկացիւնք եւ ապրեցանք
 Ինչպէս լեռը Արարատեան:
 Իսկ դուն անսիրտ հայրենաթող
 Որ քանդեցիր տուն ու տանար
 Ու գայրոյթով մը հեռացար.
 Այժմ՝ ըսէ՛, պիտի կրնա՞ս
 Պահել հոգիդ վեհ, անվնաս:
 Քու մայր հողէն այսօր հեռու
 Իր կարօտէն պիտի չայրի՞ս . . . :
 Գուցէ ապրիս . . . : Բայց միշտ հլու
 Եւ ի հարկէ մունջ, անկեզու:

«Խօսնակ», 1985

ՈՐՊԷՍՁԻ ՍՈՒՄԿԱՅԹԸ ԶԿՐԿՆՈՒԻ**ՅՈՐԴՈՐ**

Այ հերիք չէ՞, ամէն սեւ պահ
 Լանք ու երգեցեմ
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ոտքի ելիր հայ քաջ տղայ
 Եւ սուրովդ գարկ անխնայ,
 Թող թշնամին սողայ, դողայ:
 Զարկ դուն անվերջ չար ոսոխին
 Այնքան ուժեղ, այնքան ուժգին,
 Որ փշրուին գանկ ու ոսկոր:
 Թող փշրուին դառնան փռշի
 Եւ հովերուն հետ երթան լուծուին
 Զորս հովերուն,
 Զորս ծագերուն,
 Եւ աշխարհէն անյայտանան:

Քու ունեցած ոյժիդ կոթնիր,
 Այլոց ոյժին մի՛ վստահիր:
 Գիտցիր նաեւ թէ ոյժն է միշտ
 Որ կ'ընծայէ կեանք մը անվիշտ,
 Կեանք մը ազատ ու յարատեւ:

«Պայթար», 1988

ԵՐԲ ԿԸ ՄՏԱԾԵՄ . . .

Կեանքիս կանթեղին ձեռքն երբ սպառի
 Ու կանթեղս վառ
 Ի՛ր իսկ մեղկ բոցէն այրի ու մարի
 Եւ մթնէ աշխարհ . . .

Ըսէ Երկնաւոր, ի՞նչպէս պիտ' սպրիմ
 Մութ աշխարհին մէջ,
 Երբ այժմ իսկ հոգիս կարօտ ծով լռյսին
 Կը հիւծի անվերջ:

Տէ՛ր, կասկած մը սեւ գանկս կը յուզէ,
 Երբ կը մտածեմ . . .
 Թէ կեանքիս վրայ երբ մութը իջնէ
 Երբ ես՝ ալ ես չեմ . . .

Աստուած իմ արդեօք զիս պիտ' ընդունի՞ս
 Որպէս մէկ որդիդ . . .
 Զի քեզմով միայն սպրեցաւ հոգիս,
 Փարած վեհ շունչիդ:

«Պայքար»

ԿԵԱՆՔԸ

Երէկ, այսօր եւ գուցէ վաղը

Երբ աշխարհ եկայ . . .

Արար աշխարհը սեւ խաւարին մէջ լուռ կը տառապէր
Եւ մարդը մարդուն սուրբ արիւնովը կը շնչէր, կ'ապրէր:

Երբ աշխարհ եկայ . . .

Մարդիկ անսրւաղ գայլերու նման հոգւով դառնացած՝
Կը յօշոտէին բագում անմեղներ կոպտօրէն կատղած:

Երբ աշխարհ եկայ . . .

Զերք անմայր թռչուն բաց երկինքին տակ որք, հալածական,
Զունեցայ տաճուկ բոյն հանգստաւէտ, ոչ ալ ապաստան:

Երբ աշխարհ եկայ . . .

Ես մի մանուշակ ցուրտէն ու բուժէն յար սարսափահար,
Զունեցայ երկինք գուարք եւ կամ օր պայծառ:

Երբ աշխարհ եկայ . . .

Օրերըս եղան մութ, աղէտալի եւ յար փոքորկոտ,
Որոնց չար շունչէն յաւէտ չճացան ծառեր, ծիլ ու ոստ:

Եկայ . . . ու կ'երթամ.

Սակայն մտահոգ թէ աշխարհին արդեօք պիտ' ըլլա՞յ խաղաղ,
Որ մարդիկ ամէն եւ տարերք ամէն հնչեն երգ ու տաղ:

«Պայքար»

ՀԱՅ ԵՄ ԵՍ

Հայ եմ ես,
Յոյժ չարչարուած հայ մ'եմ ես:

Արարիչը երկինքէն
Երբ էութեանս շունչ տուաւ,
Հայու սիրտ մը շնորհեց
Եւ նակտիս՝ գիր մը դաժան:

Դեռ տհաս, անխօս մանուկ,
Մահուան ձորերն չափեցի,
Ծանրանիստ խաչը ուսիս,
Զարատանջ վերքը սրտիս,
Թափառեցայ սար ու ձոր,
Ուր մահուան շունչը դաժան
Կը հնձէր մանուկ ու ծեր
Անսրտօրէն, անխնայ:

Բիւրապատիկ տանջանաց
Տոկացի ու ապրեցայ,
Եւ հայ հոգին փառապանծ
Պահեցի միշտ անաղարտ:
Երագեցի ես անվերջ
Արշալոյսը կենսատու
Եւ աննենգ ձեռք մը գրոտ:

Անմարդկային բրտութեանց
Տոկացի ես միշտ,
Զի հայ եմ ես
Եւ հպարտ հայ:

Հայ ծնելուս
Փառք տուած եմ Արարչութեան
(Թէպէտ կեանքս եղած է միշտ
Սեւ ու դաժան):
Բայց չեմ ընկնուած,
Այլ հագար հեղ
Շեփորեր եմ ողջ աշխարհին
Թէ պիտ' ապրինք եւ մահառինք
Զար բախտին դէմ
Ու ազգովին շքեղօրէն
Պիտի տօնենք
Հայուն երթը յաւերժական:

«Նոր Օր»

ՏՈՂԵՐ ու ՏԱՂԵՐ
ԳԻԿ՝

Մասնաճյուղի ԵՐԻՎ

(Մասնաճյուղի Գլխավոր)

ՊԱՏԵՐԱԶՄ

Մանուկ մ'էիր եւ Կայէնի գէնքը երկսայրի կայծքար մըն էր լոկ . . .
 Սաղայէլը գայն հոգեփոխեց: Կայէնը մեծցաւ . . .
 Իրեքասպանութեան միտքը տիրական դարձաւ:
 Ու ժամանակը քեզ արդիացուց ի վնաս մարդկութեան:
 Եւ ես կ'ատեմ քեզ.
 Կ'ատեմ քեզ, որովհետեւ մորթիս վրայ երէկի մահակնիքը դեռ կը կրեմ:
 Կ'ատեմ քեզ, որովհետեւ հոգիս անշիրիմ դիակներու դամբարանի մը
 վերածեցիր:
 Ատելութիւնս հորիզոն չունի՛ր. ու թշնամի եմ արիւնքերութեան,
 վասն զի, արդ, անիւններն անթաղ գոհերուն,
 Իրենց խօսքերն — ռումբերէն ալ պայթուցիկ — զիս կը սաստեն ըսելով.
 «Մի՛, մի՛ վերցներ այն նիւթը, որ արիւնի ծարաւն ունի,
 «Մի՛ անսար այն տիրոջ, որ դիակներու քաղցէն կը կաղկանձէ:
 «Մի՛ ցանկար այն փառքերուն որոնց ժապաւէններուն կարմիրը
 քու նմաններուդ արիւնէն առեր է իր գոյնը»:
 Կ'ատեմ գեղեցիկ, ո՛վ հրէշածին վիուկ.
 Գուցէ վաղը աշխարհաւեր ուրականի մը պէս, յանկարծ,
 Խաղաղութեան եւ սիրոյ կարօտ ժողովուրդներուն վրայ կատաղօրէն կոնչես
 ու մահ հոսեցնես:

«Նոր Գիր», 1936

ՀԱՅ ԱԶԳԻՆ ՓԱՌՔԸ

Արարատին պէս անմահ, աստղերու պէս յար անշէջ,
 Բազմամանանց շողերով թեւ տուիր հայ տաղանդին.
 Ո՛վ հէզ բարբառ հայկական Աստուածային հուր լեզու,
 Քանի կ'ապրին հայորդիք պիտի ապրիս առ յաւէտ:

Դարե՛ր, դարեր շարունակ՝ իբրեւ կայծակ իբրեւ լոյս
 Անփառունակ սրտերու սէր ու հաւատօ՛ճօնեցիր
 Եւ արդ, սրտերն այդ հայկական կ'ոգեկոչեն միաձայն
 Քանի կ'ապրին հայորդիք պիտի ապրիս առ յաւէտ:

Գեղօն երգ մ'ես հրաշունչ հրեշտակներն իսկ երկնի
 Բարձրադաղակ քեզ կ'երգեն ի փառս հայ ազգութեան,
 Ո՛վ փառապանծ հեշտ նուագ Աստուածային հուր լեզու
 Քանի կ'ապրին հայ մուսայֆ պիտի ապրիս յաւիտեան:

«Պայքար», Նոյեմբեր 23, 1943

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ՄՕՐ ՄԸ ՏՐՏՈՒՆՋԸ

«Հայր մեր որ յերկինս ես»,
Բաց փեղկերդ ամրակուռ
Ու մեղագործ մարդկութեան
Ուղիղ մամբայ մը ցոյց տուր:

Հնարիչի ուղեղդ երբ
Ձեռակերտիդ յանձնեցիր,
Հանապազօր անեցաւ
Բիրտ չարութեան ի խնդիր:

Արդարասէ՛ր արարիչ,
Քու ցատումդ ամենի
Ինչպէ՞ս կրնաս զսպել դուն
Ի տես չարեացն աշխարհի:

Մայր մ'եմ ահա ո՛վ Աստուած,
Որդեկորոյս, սգաւոր,
Արտասուաթոր աչքերուս
Լոյսը շիջաւ օրէ օր:

Եւ արդ կոյր մ'եմ տարաբախտ,
Անյո՛յս, անտո՛ւն ու անտէր.
Զկայ սի՛րտ մը գթասէր,
Անհուն վիշտս է ինձ ընկեր:

Թուրք լակոտ մը ոճրամոլ
Սրածայր իր դաշոյնով
Կուրծքս պատոնեց վատօրէն
Ու հեռացաւ անխոռով:

Երբ անունդ յիշեցի
Զայրագին քեզ անարգեց.
Զայն անպատիժ թողուցիր,
Միթէ քե՞զ ալ կաշտեց:

Դանակակոծ, անյարիր,
Մարմինս այս լըլկուած
Ո՞ւր պահեմ, ո՞ւր, ըսէ ինձ,
Իմ ցաւերուս խուլ Աստուած:

Արիւնաթոր վերքերէս
Ագռաւներն իսկ կը գանին.
Արեւն անգամ կը սարսի
Երբ կը ճրչամ ես ուժգին:

Խղնա՛ Տէր իմ երկնաւոր
 Ու շնորհէ ինձ կրկին
 Մանկութիւնս անգիտակ
 Եւ կամ կեանք մը երկնային:

Կեանք մը անցաւ, դիւրատար,
 Երկնի կեանքին նմանակ.
 Շնչեմ, ապրիմ պահիկ մ'ալ
 Երկրիս վրայ, երկնիս տակ:

«Հայր մեր որ յերկինս ես»,
 Բաց բու սիրտս վե՛հ, մաքուր,
 Ու չարագործ մարդկութեան
 Անհատ՝ գութեդ ցօղ մը տուր:

«Պայգար», 1952

ՀԱՅՈՒ ՀՈԳԻ

Զօն՝ Ապրիլեան հայ նահատակներուն

Գեղապայծառ հայու հոգի աննկուն,
Բի՛ւր բի՛ւր անգամ փա՛ո՛ք քեզի
Որ դարերով հալածուեցար օրն ի բուն,
Բայց մնացիր դուն միշտ խրոխտ, անյեղի:

Ես քեզ մանչցայ տառապանքի օրերուդ,
Երբ մահուան դէմ յանդիման՝
Անապատի մամբուն վրայ լճուած, բայց անփոյթ
Դու լոյս մ'էիր անխափան:

Տարիներով գերութեան մէջ քեզի հետ
Մեր երթն էր փշալից.
Դու անյողողող հայու հոգի փրկարար,
Միշտ ապրեցար սրտիս կից:

Հիացայ ես քու կորովիդ եւ իսկոյն
Հանանչներուդ կառչելով,
Վեհութենէդ երկիւղած՝ այդ իսկ պահուն
Զինուեցայ նոր հաւատով:

Ես քեզ տեսայ խաչին վրայ Յիսուսի
Երբ հայ կոյսեր խաչուեցան.
Ինչպէս խաչուած Յիսուս մը յիրարի
Հաւատացի յարութեանդ:

Ահա մի օր արեւին պէս Արարատի գագաթէն
Յնծութեան բիր շողերով
Աւետեցիր մեզ՝ յարութիւնդ ուժգնօրէն
Նոյն սրբազան հաւատով:

Պիտի ապրիս իբրեւ լոյս ինչպէս արփին անարատ,
Զի ջահն ես արարչութեան.
Դարերուն հետ պիտի քայնս վեհ ու անվարան,
Հայու հոգի անսասան:

«Պայֆար», Ապրիլ 20, 1952

ԱՆՄԱՀՆԵՐԸ

Երեկ անոնք գոհաբերող ժիր մշակներ
 Գանձերն իրենց նուիրեցին հայ արուեստին,
 Իրենց միտքէն շող մը միայն բաւական էր
 Մինչդեռ անոնք պատրաստ էին տալ անլին:

Մեր պահակներն ֆաջամարտիկ եւ անվեհեր
 Ու աչալուրջ՝ հայրենիքին միշտ հսկեցին,
 Երբ ժամն հնչեց հերոսութեան, անթի՛ւ ֆաջեր
 Կեանքներն իրենց հայրենիքին ընծայեցին:

Եւ արդ անոնց հոգիները լուսածորան,
 Անհունին մէջ գերք արեւ մը հրաշափառ,
 Լոյս կը սփռեն հայաշխարհին նուիրական,
 Լոյսն իրենց միշտ կենսատու եւ փրկարար:

Պանդուխտ հայուն հայրենաբաղձ երգերուն մէջ
 Միշտ կենդանի հերոսներն են անգուգական.
 Հայաստանի երջանկալիւր սրտերուն մէջ
 Տիրող լոյսն ու շէնշող կայծն են վաւերական:

Ու հայագգի ամէն մէկ տաղ, ամէն մէկ գիր,
 Երբ կը կարդանք, անտարակոյս անոնց հոգին
 Այդ գիրերէն յար անանջատ ու անձանձիր
 Մեզ կը դիտեն, մեզ կը լսեն, մեզ կը խօսին:

Հայ ֆերթողին գրչէն բոխած վսեմ խոհերն
 Լիակատար պատկերն է անոնց հոգւոյն.
 Աշուղներու տաղարանին հնչուններն
 Ցայտունօրէն կ'արտայայտեն անոնց լեզուն:

Երբոր մտնենք Հայաստանեայց Եկեղեցին
 Եւ ունկնդրենք շարականներն աստուածաբառ,
 Մեղեդիներն հրեշտակաց ու երկնային
 Անմահներն են գոր կը խօսին գերք յուշարար:

Երբոր դիտենք ջինջ երկինքը լուռ գիշերով,
 Հոն պիտ' տեսնենք հոգիները նահատակաց.
 Շէն աստղերէն ալ լուսավառ պայծառ դէմքով
 Յաղթանակի լոյս-պսակով շրջապատուած:

Փա՛նք ձեզ հայոց բազմաչարչար նահատակներ,
 Ձեր հոգիներն աստուածամերձ ու անսասան
 Հայ սրտերուն մէջ պիտի ապրին դարե՛ր, դարեր,
 Քանզի դուք էք մեծ խորհուրդը անմահութեան:

«Պայթար», Մայիս 1, 1953

ՄԻ ՏՐՏՆՁԱՐ

Մի տրտնջար՝ ո՛վ հողեղէն արարած
 Թէ այս աշխարհն բիրտ վիշտերէն զառամած
 Սոսկավիթխար պատեան մըն է այլալլած:

Մի տրտնջար՝ թէ այս աշխարհն վատերու
 Բոյն մ'է հանգիստ թէ անմեղն է հոգածու
 Բազմահագար տանջանաց ու ցաւերու:

Մի տրտնջար՝ երբ պարտէգո վարդաբոյր
 Զմբան ցուրտէն ըլլայ պատկեր մ'անհրապոյր,
 Այս աշխարհէն քէն մի պահեր դուրս ի գուր:

Մի տրտնջար՝ երբ ջութակիդ լարերէն
 Զորսէն մէկը փրթի իյնայ վատօրէն.
 Լաւ իմացիր բան չի պակսիր աշխարհէն:

Մի տրտնջար՝ երբ արեւդ կենսատու
 Երթայ հանգչիլ խորն անհաս ամպերու.
 Նա հոն կ'երթայ արդար շողեր ծնելու:

Մի տրտնջար՝ երբ աչքերդ մթագնին,
 Մութին մէջ իսկ յո՛յս կայ, լոյս կայ երկնածին,
 Փնտռել պէտք է մինչեւ հասնինք ցուրտ շիրմին:

Մի տրտնջար՝ այլ ըմբոնէ ո՛վ իմաստուն,
 Թէ մարդիկ ալ նման բոլոր էակներուն
 Բիրտ ցաւերու ծանրութեան տակ միշտ ընկնուած
 Պիտի մեռնին ու անհետին. վերըն Աստուած
 Պիտի հրճուի ի տես անունց գուր փնացման,
 Քանզի այս է դաժան օրէնքն արարչութեան:

«Պայթար», Սեպտեմբեր 3, 1953

ՕՍՄԱՆԸ

Օսման անուամբ մարդ մը կար
 Հոգին դաժան սիրտը չար.
 Ինքն էր անփոյթ տնաւեր
 Գազանացած մարդակեր:

Կեցուածքը բիրտ, չարատեր,
 Սաղայելեան դէմք մ'ունէր:
 Հոգիէն՝ իրիզն, սրտէն՝ սէր
 Բնա՛ւ, բնաւ չէր բխեր:

Բորենի մը բացարձակ,
 Կ'ուտէր, կ'ապրէր անվաստակ.
 Ցասկոտ, քշուտո, վայրենի,
 Արիւնախանձ, անօրի:

Կուրծքէն կախուած անբաժան
 Զէնք ու գրահ զանագան,
 Ատրճանակ ու տապար,
 Դաշոյն, աղեղ միալար:

Աստղն ու մահիկն ալ արդէն
 Գողցեր էր ան երկիւնքէն,
 Որոնց փայլին սիրահար
 Կը յոյսորտար անդադար:

Եւ Օսմանը դիւահար
 Հոգին դաժան սիրտը չար,
 Դահի՛ն մը յար տնաւեր
 Մտաւ այգին բարեբեր:

Զարկա՛ւ, ջարդե՛ց ծիլ ու ծառ,
 Թուփեր առողջ ու նիհար.
 Ո՛չ վարդ մնաց, ո՛չ սոխակ
 Թողուց հետքեր աներակ:

Քանդեց հիմէն այգետունն,
 Անմեղ թռչնոց շէն բոյնն,
 Եւ Օսմանին ձեռքը վատ
 Դարձուց այգին անապատ:

Օսմանն մնաց առանձին.
 Ամալացաւ հո՞ծ այգին,
 Իր Ալլահը բարեհա՛ն
 Փրկեց հոգին անմահանչ:

Իր գործերն անիրաւ
Մահմետն տեսաւ ժպտեցաւ:
Մարդիկ մոռցան օրերն հին
Ու ներեցին Օսմանին:

Տառապակոծ հայ հոգին
Ձայնն ուղղելով աշխարհին,
Բարձրադադակ ձայնով ժիր
Ձայնարձակեց իր վնիռ.

— Հէ՛յ աշխարհի վատորդիք,
Հայն ալ ունի ըսելիք.
Հայուն հոգին անվեհեր
Լի՛րբ Օսմանին չի՛ ներեր:

Ներե՞լ ձեռքին ջարդարար,
Ոնիրներուն անարդար.
Զէ՛, չե՛նք ներեր Օսմանին,
Քանի Օսմաններ կ'ապրին:

«Պայքար», 1953

ՆԵՐՐՈՂԱԳԻՐ ԱՌԿՈՄԻՏԱՍ

Կայ Աստուած մը ստեղծող
Որմէ կուգան յոյս ու շող.
Մարդ Աստուած մ'ալ դուն էիր
Իմաստուն եւ լուսալիր:
Տուիր ազգիդ երգ ու պար
Անգուգական, հիաշունչ,
Սուրբ քնարէդ բազմալար:

Վաստակաւոր վարդապետ,
Անհուն գանձեր պեղեցիր
Րոպէներով խոնջալիր:
Դու առաքեալ եւ պուէտ
Անողոք բախտը քեզ ալ
Պատարագեց գերդ խաչեալ:
Եւ արդ, հայոց սրտին մէջ
Տիրաւանդ լոյս մ'ես անշէջ:

«Պայքար», 1953

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Արեւ մը չեմ որ շողեր տամ անուշ հողիդ, շէն Հայաստան.
Ռ-ազմիկ հայ մ'եմ հայրենագուրկ եւ նժդեհ մը անապաստան:

Քաջամարտիկ սերունդներուդ հերոսական հոգիներէն
Ես խրատուած, ահա կուգամ սիրտս քեզի նուիրելու
Զմայլիկի փառքիդ առջեւ, ո՛վ դու երկիր պերն, հոյաշէն:

Ազատութեան նամբուն վրայ, եւ խաչեալին խաչին համար
Նորաբողոքոջ գաւակներդ սրտով դիւցագն, հոգուով արդար,
Մրրկաբեր ոսոխներու դէմ յանդիման միշտ անհլու
Արիաբար դիմադրեցին եւ յաղթեցին ոսոխներուն:
Հաւատքն իրենց փրկուեցաւ. անոնք մեռան, որ ապրիս Դուն:

Հողըդ բերրի, Աստղըդ պայծառ, յաւիտաւանչ, վեհ Հայաստան,
Անմահութեան դափնիներով կը շողշողաս աստղանման:
Յանուն փառքիդ ու մեծութեանդ, հայրենիք իմ նուիրական.
Անապաւէն բեկորներուդ յո՛յս տուր, բո՛յժ տուր, տո՛ւր ապաստան:
Մրբազնագոյն անուշ երկիր, հայ սրտերու՝ ո՛վ չճնաղ մայր,
Տիեզերքի երկրաց մէջէն քեզ ընտրեցին դրախտավայր:
Անգուգական վեհութենէդ մոլեգնօրէն յափշտակուած
Նախահայուն նման ես ալ քեզ կը պաշտեմ իբրք Աստուած:

«Պայքար Տարեգիրք», 1953

ՆԵՐԷ ԻՆՁ ԱՍՏՈՒԱԾ

Ընդմիջտ հալածուած ես մի հայորդի,
 Եթէ արեւէն շող մը խլեցի
 Ապրելու համար գարուն մ'աւելի . . .
 Ներէ՛ ինձ Աստուած:

Եթէ երկինքէն աստղ մը լուսաւոր
 Կրցի բանտարկել սրտիս մէջ անգոր
 Զմուրալու միջտ յոյս, լոյս ու շնորհ,
 Ներէ՛ ինձ Աստուած:

Թէ յանդգնեցայ մերթ մտածելու
 Իշխել ամենին, հգոր թէ հլու,
 Որ անվերջ չերգեմ փառքիդ ակելու,
 Ներէ՛ ինձ Աստուած:

Քեզմէ ընդունած միտքս անարգել
 Թէ ըմբոստացաւ որպէս սաղայել,
 Ու չուզեց գահդ յաւետ մեծարել,
 Ներէ՛ ինձ Աստուած:

Մի ներեր եթէ բախտէն գարնուած
 Որբին, աղատին, մերկ ու լանջարաց
 Զտուի երբեք պատաստիկ մը հաց:

Եւ կամ զլացայ կոյրին՝ ապաստան,
 Ու թողուցի որ յար անօգնական
 Մթնշաղին մէջ անյոյս մնայ ան:

Արժանի չեմ ես գութ ու գորովի,
 Եթէ թշուառին երբեք չտուի
 Խինդ, ժպիտ, փոխան՝ վիշտ ու արցունքի:

Յիշեալ մեղքերուս մի՛ ներեր Աստուած,
 Այլ փշրէ գանկն այս ուր կան անթեղուած
 Անծին խորհուրդներ ու երգեր չերգուած:

«Պայլար», Յունուար 3, 1954

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԻՂՁ

Ամպե՛ր, թուխ ամպեր, սուրացող ամպեր,
 Ձեր մարգարտաշիթ ցօղերը բարի,
 Տարե՛ք, թափեցե՛ք վեհ Հայաստանի
 Հողերուն վրայ, ուր ազգ մը կ'անի:

Ծովերէ հեռու, գետերէ հեռու
 Անջրդի դաշտեր ունինք անսահման.
 Գացե՛ք դուք ամպեր անոնց ռոռգման,
 Որ մի՛շտ ձեզ օրհնեն հայն ու Հայաստան:

Ոսկի արեւը իր հուր շողերով
 Կ'այրէ կը խամրէ հասկերը վաղուան,
 Ո՛հ, շտապեցե՛ք անոնց փրկութեան,
 Որ սով չտեսնեն հայն ու Հայաստան:

. . . Կանգ առե՛ք ամպեր, արցունքներս ահա
 Ձեր ցօղերուն հետ տարե՛ք Հայաստան,
 Այդ սուրբ երկրին մէջ սգաւորներ կան,
 Որոնց որդիքը կոուի մէջ մեռան:

Տարե՛ք քաղաքի հայոց մայրերուն
 Իմ արցունքներս ու սիրտս լման:
 Թող միտիթարուն զի քաջաց արեամբ
 Յաւէտ փրկուեցան հայն ու Հայաստան:

«Պայխար», Փետրուար 4, 1954

ՇԱՒԱՐՇ ՍԵՒՅՕՆՔԵԱՆԻՆ

Առաքելատիպ խանդոտ հայորդի
Նոր ջահակիր մ'ես յոյսի, հաւատքի,
Եւ առաջնորդող աստղ մը լուսավառ
Այս նոր աշխարհը դուն բարով եկար:

Եռանդով օժտուած սիրտդ եզական
Գանձերով լեցուն ծով մ'է իրական,
Ո՛վ դուն քաջորդի անխոնջ նաւավար
Մեր այս ասիերը դուն բարով եկար:

Դու գոհարերդ խիզախ կամաւոր,
Կարծես թէ հոգիդ արեգակ մ'է նոր.
Իր նամանչներով յար սփռփարար
Այս երկրագունդը դուն բարով եկար:

Մտքով մշտարթուն, աչքով սրատես,
Ազգին կարիքը կանխաւ կը տեսնես,
Եւ իր վիշտերուն կը նարես հնար,
Թանկագին հերոս դուն բարով եկար:

Հնչեցուր ձայնդ գերթ հզօր կոչնակ,
Թող լսուի ձայնդ քաղաքէ քաղաք.
Թող հայն իմանայ գործդ փրկարար
Որ հայ սրտերէն բոլորին գանձ ստուար:

«Պայքար», Մայիս 8, 1954

ԴԱՀՃԱՊԵՏԻՆ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Այս հողին մէջ, այս ֆարին տակ
 Թուրք մ'է պատկած, դահին մ'անյագ,
 Իր Ալլահներն անոր ցակտին
 Դահին բառը խարանցիկն:
 Անմարդկային արարներն իր
 Հոս գրուած են արեամբ կարմիր,
 Ինչ որ գրուի արիւնով հիր
 Յաւտեանըս չի ջնջուիր:
 Այս դեւորդին որքան մեծցաւ
 Դարձաւ հրէշ վատահամբաւ
 Նման գայլ մը արիւնատենչ
 Որսաց գառներ հիւղերու մէջ:
 Նենգաւորը՝ փոքր ու մեծ
 Հայ մանկտի՛ք յափշտակեց.
 Մայր ու գաւակ միասնաբար
 Ողջակիզեց խարոյկավառ.
 Փորեց աչքերն այն հայերուն
 Որք կոչուէին մեծ իմաստունք.
 Ծերունիներ թոյլ ու տկար
 Գետնահարեց կացինահար.
 Անթիւ կոյսեր կաթնամարմին
 Ստինքներէն գամեց խաչին:
 Աղաղակը միլիոններու
 Եւ աղերսներ մօտ թէ հեռու
 Ունկնդրելով զուարնացաւ
 Արիւն խմեց ու կատղեցաւ:
 Բորենին այս սնահաւատ
 Դաժանօրէն եւ անվհատ
 Փորձեց ջնջել ցեղ մ'աստուածեան
 Յեղ մը սրտով անգուգական:

Անցան օրեր ու տարիներ
 Հայն թափառ ու տնաւեր
 Զափեց անծիր անապատներ.
 Թէպէտ, ստէպ կը մտածէր
 «Ինչո՞ւ տանիլ այսքան լուտանք,
 Հերի՛ք է այս գուր տառապանք»:
 Եւ հայ ցեղին ոգին առողջ
 Փողահարեց զիլ մարտակոչ:
 Վրէժխնդիր ու խոհունի
 Արիասիրտ մի պատանի
 Յեղին սրտէն դուրս պոռթկալով
 Ըսաւ. «Ազգ իմ կաց ապահով,
 Այս արեւս կանանչ ու վառ
 Պիտի գոհեմ քեզի համար»:

Եւ հայ տղան խաւարին մէջ
 Դարձաւ աստղ մը վսեմ ու պերն:
 Հետապնդեց անյուսահատ
 Ոնրամոլը ամենավատ:
 Թափառեցաւ արար աշխարհ
 Հայաստանի բախտին համար:
 Քաղքէ քաղաք խորագնին
 Հայաստանէն մինչեւ Պերլին:
 Ու բախտաւոր օր մը պայծառ
 Ան նշմարեց որսըն անպատկատ:
 Այո, ան էր, չէր սխալեր,
 Թէեւ թուրքը ծպտուած էր:
 Ան էր այո, ազատ, հպարտ
 Որ կը նեմէր խղճով անպարտ:

Ակնթարթ մը եւ պատանին
 Քովն էր արդէն դահնապետին:
 Թէպէտ յուզուած բայց լիաշունչ
 Յանկարծ գոռաց «չէ՛ նեխած շունչ,
 Ապիկար թուրք, բռնապետ շուն,
 Անհայր, անմայր որբ մ'եմ անտուն:
 Մօրս կանչին հեզ ու հլու
 Եկած եմ քեզ սպաննելու:
 Անէծքներովն իմ քոյրերուս
 Եւ հաւատովն իմ պապերուս
 Ահա այսօր վերագինուած
 Դարձեր եմ ես դեռ ու Աստուած:
 Գնդակներով ականակիտ
 Թագ մ'եմ բերեր տխեղծ գանկիդ»:

Ջարդուածները շարա՛ն շարան
 Թուրքին աչքին պատկերացան.
 Բայց ամենքը զինուած էին
 Ինչպէս անվախ այս պատանին:
 Թուրքը՝ դողաց սարսափահար
 Որպէս շուն մը անօգ, շուար:

Ազատասէր հայ պատանին
 Սրտապնդուած գոռաց կրկին.
 «Ապաժամ է մի՛ պաղատիր,
 Երէկ գուր տեղ դու խաչեցիր
 Բազմահագար հայ յիսուսներ,
 Որոնց արիւնն դեռ չէ ցամփեր:
 Հոգիները մարտիրոսներու
 Եւ հայ սրտերն վրիժավատ
 Երէկ գիշեր հանդէս եկան
 Եւ ամենքը միաբերան

«Սուրբ գնդակդ ով պատանի
 Զբլա՛յ, չբլա՛յ որ վրիպի»:
 «Անոնք աչքիս աստուածացան
 Իսկ դու անմիտ դարձար սատան»:
 Ու լսուեցաւ շանթանման
 Որոտում մը անհրճայն.
 Հայ գնդակն էր հրաբորբոք
 Որ կը փշրէր գանկ մ'անողոք:
 Խաղաղութիւն հայ աշխարհին
 Հերոսացաւ հայ պատանին,
 Ապրի՛ յաւէտ հայու հոգին:

«Պայքար», 1954

ՄԻ՛ ԼԱՐ

Մի՛ լար հոգիս, մի՛ արտասուեր դուն ի գուր
 Քեզ պիտ' բերեմ երկնից գանձեր լուսասփիւռ,
 Ու գոհարներ աստղերու պէս պսպրդուն,
 Որոնց վրայ հսկեր եմ ես մշտաբթուն:

Ո՛վ վշտաբեկ ծաղիկ հոգիս յար անուշ
 Շոյանքն անա գով գեփիւռին գգուանուշ,
 Դեռ պիտ' բերեմ մեղեդիներ վաղ կամ ուշ
 Կարկաչահոս աղբիւրներէն գեղանուշ:

Մի՛ լար հոգիս, մի՛ արտասուեր դուն այդպէս,
 Կեանքն արդէն վտիտ լոյս մ'է էապէս:
 Թոյլ տուր հսկեմ կեանքիդ լոյսին զի ընդմիջտ
 Հովեր կուգան չա՛ր չա՛ր հովեր լիավիջտ:

Բուրաստանէն վարդ եմ բերեր քեզ համար
 Ու հոգիս մեղմ նուագներն սիրալար:
 Ո՛վ իմ յոյս ու թագուհիս վշտահար
 Վիշտդ ինձ տուր, թող որ ես լամ, դուն մի՛ լար:

Մի՛ լար հոգիս, շուտով կ'անցնին թուխ ամպեր
 Ու կը բացուի հորիզոնը մթաստուեր.
 Հերիք դուն լաս, տես արեւը կենսարար
 Քեզ կը ժպտի գերթ դշխոյ մը խանդավառ:

«Պայքար», Յունուար 21, 1954

ՅԵՏ ՄԱՀՈՒ ԶՐՈՅՑՆԵՐ

Երբ օր մը ես
Անշնչանամ
Այս աշխարհէն
Քաշուիմ երբ-ամ,

Բարի թէ չար
Մարդիկ ամէն
Պիտ' բոլորուին
Եւ գրուցեն.

— Դեռ երէկ էր,
Նա մեզ հետ էր,
Միջոցին մէջ
Կար ու կ'ապրէր:

Կապով մ'անյայտ
Մեզ կապուած էր,
Մերք կորսուեր
Բայց մեզ հետ էր:

Կապը փրթաւ
Ըսինք — մեռա՛ւ:
Ինքը գնաց,
Վիշտը մնաց:

Երէկ կ'երգէր,
Այսօր լուռ է.
Երէկ յոյս էր,
Այսօր յուշ է:

Իր ողջութեան
Արթուն կ'իշխէր,
Թէ՛ ձախ թէ աջ
Յոյս կը բաշխէր:

Երէկ պահակ
Եւ աշարուրջ,
Այսօր դիակ
Յաւետ ի մունջ:

Թէպէտ տակաւ
Նա խաչուեցաւ,
Բայց իր վիշտը
Մարդ չիմացաւ:

Սիրտն անոք
 Լուռ մխացող,
 Զըմբռնչիսնեց
 Կեանքէն մէկ շող:

Լացո՛վ եկաւ,
 Ահով գնաց:
 Ինչո՞ւ եկաւ,
 Ինչո՞ւ գնաց:

Թողուց գնաց
 Լուռ անաղմուկ,
 Իբմէ մնաց
 Լն՛կ արտասո՛ւք — :

Եթէ օր մ՛ալ
 Հողին տակէն
 Կամ երկինքէն
 Դուրս սողոսկիմ,

Պիտի ապշին
 Մարդիկ ամէն
 Եւ հանապազ
 Պիտի լոեն:

«Պայթար», Սեպտեմբեր 12, 1954

ՊՈԼԻՍ

Շէն էր երէկ . . . իսկ այսօր
Փլատակներ դէս ու դէն
Փողոցներուն լուռ կ'իշխեն:

Հոծ խանութներ կ'իսափուլ,
Հիւղակներուն չկայ դուռ,
Սրտերու մէջ կայ սարսուռ:

Մթերքները ցիրուցան,
Ուտեստեղէնք կ'ենաստու
Կեր դարձեր են մուկերու:

Ցեխերու մէջ քաթախուած
Թանկագին մուշտակ մ'ահա
Ուր ծեր կատուն կ'հանայ:

Եւ տանարներ աղօթփի
Ուրտեղ Գրիստոսն կ'իշխէր
Արդ կը նիրհեն հոն բուեր:

Իսկ աղօթող տէր պապան,
Խոնարհ ծառան Յիսուսի
Հոն մերկ նստած կը մնի:

Անմեղ կոյսեր բիրաւոր
Նուաստօրէն խոշտանգուած
Այժմ կ'արտասուեն դառնացած:

Մդոններով տարածուն
Կարծես մրրիկն է գարկեր
Եւ կամ ծով մը նահանջեր:

Թող աշխարհը իմանայ
Թէ վռնմակ մը գորշ գայլեր
Այս վայրերէն են անցեր:

Շէն էր երէկ, իսկ այսօր
Փլատակներ դէս ու դէն
Փողոցներուդ լուռ կ'իշխեն:

«Պայքար», 1955

ԽՕՍՔԵՐ ՎԵՐՋԻՆ

Ո՛վ իմ բարեսիրտ անգին եղբայրներ, ինձի մի՛ դպչի՛ք,
 Թողե՛ք որ մերժեմ՝ ճեռն եղբայրական եւ ամէն բարիք.
 Ինձի մի՛ դպչի՛ք, արդ ես շնչաւոր դիակ մ՛եմ անպէտք
 Թոյլ, թոյլ մաշկերով կեանքին եմ կապուած կեանքէն ահաբեկ:

Ո՛հ . . . զգո՛յ՛շ, տղա՛ք, թէպէտ վիրաւոր սակայն ողջ եմ դեռ
 Բիրերով գինուած արինաճարաւ թուրք բորենիներ.
 Խոյսացան վրաս ու հագար անգամ սիրտս խոցեցին,
 Արիւնս ժայթքեց ու անէծքի պէս փակաւ երկինքին:

Եւ ահաւասիկ դիակ մ՛եմ անշարժ, աչքերս գամած
 Երկնի վեհութեան ուր հոգիս դժգոհ կ՛երթայ առ Աստուած.
 Աղօթքի փոխան գանգատներ ունիմ հագարապատիկ,
 Զի ես խաչուեցայ, ինչպէս Աստուծոյ որդին մէկ հատիկ:

Թողե՛ք որ մեռնիմ, ապա դուք տարե՛ք խաչն այս մեծափառ,
 Որուն կառչեցայ եւ աղօթեցի գերթ մանուկ մ՛արդար,
 Տուե՛ք գայն մօրըս եւ ըսե՛ք՝ թէ դաշոյնն էր որ
 Կրցաւ դիմանալ տմարդութեան դէմ ուր խաչն էր անգոր:

Հօրմէս ժառանգած ծրար մ՛ալ ահա, անգին ընկերներ,
 Որուն ծալեքէն դեռ կը կաթկթին արեան կաթիլներ.
 Թողե՛ք՝ համբուրեմ այդ սրբազնագոյն դրօշն հայկական,
 Զի անոր վրայ իմ նախնիներուս արեան հետեր կան:

Հայ անմեղներու արիւնով օծուած շորն այդ սրբազան
 Թողե՛ք համբուրեմ. ապա տարե՛ք գայն հոն՝ Արարատեան
 Վեհութեանն առջեւ ուր հայ բազուկներ յար միաճուլուած
 Արդ կը կըռանեն կայծակնատարած սուրը յաղթապանծ:

Ու երբ աւարտեն գործն այդ սրբազան, հաւատացե՛ք, որ
 Պիտի մագցցին սէգ Արարատի գագաթն լուսաւոր,
 Ու հոն պիտի ցցեն յաւէտ արնագոյն դրօշն հայկական,
 Որ ան ծածանի եւ ընդմիշտ իշխէ դաշտն Արարատեան:

«Պայթար», Ապրիլ 23, 1955

ՏԵՒԱԿԱՆԸ

Դուն բազմաչարչար ազգ իմ վեհական,
Մի՛ լճեր երբեք երկիրն Հայաստան.
Ոչ մէկ ազգ ունի երկու հայրենիք,
Հայրենիքն է մէկ ինչպէս եւ երկիրն:

Հայրենի հողին եւ իր արեւին
Ընծայաբերենք մեր քիրտը չնչին.
Բոլորուինք շուրջը մեր հայրենիքին
Եւ գերդ ծառարմատ փարինք իր հողին:

Օտար հողին մէջ ոսկի ալ ըլլանք
Պիտի ժանգոտինք ի սպառ փնանանք.
Խորք երկնի վրայ աստղեր ալ ըլլանք
Ասուպներու պէս պիտ' անհետանանք:

Սփիւտփի հայեր, դուք պանդուխտ հայեր,
Սիրենք երկիրն այն ուր մեր եղբայրներ
Յանուն այսօրուան, ի սէր գալիքին
Կը կերտեն հայուն պողպատեայ հոգին:

Ի սէր հայ ազգին վսեմ փառքերուն
Սրտով միանանք մեր եղբայրներուն,
Ու մենք ալ կերտենք հայ հողին վրայ
Խրնիքներ ամուր եւ բերդեր հսկայ:

Կերտենք անընդհատ բիւր կրթարաններ,
Տարով աշխարհին մտփի տիտաններ.
Զի այս կեանքի մէջ միայն եւ միայն
Տիտան մտքերու գործք են տեսական:

«Պայքար», 1956

ՎԵՀԱՓԱՌՈՒ ՎԱԶԳԷՆ Ա.ԻՆ

Հայաստանի կոչնակները թող դողանջեն հրնուլար,
Արար աշխարհ թող իմանայ հայոց երգերն խանդավառ:
Յարանուագ մեր երգերով ներբողենք մենք գահարժան
Րարունապետ վազգէն վեհը, եկեղեցին հայկական,
Աստուածածին լոյսով գեղուն էջմիածինը վեհապանծ,
Պսակադիր մեր եղբայրներն եւ քահանայք սրբակեաց,
Եւ հայկազեան տիտաններն այժմ ողջ կամ նահատակ
Տերը պահէ եւ պահպանէ հայուն հաւատքն երկնատախ:

Արարատը երկնակատար — թէպէտ գերի այս պահուն —
Միածնաէջ գահէդ դիտէ, ո՛վ սրբազան իմաստուն
Եւ հաւատա՛ թէ օրն հրաշքի անտարակոյս պիտի գայ,
Նահատակներ բազմահազար գերթ բանակ մը գերակայ
Արթննալով՝ արդարութիւն պիտի խնդրեն Աստուծմէն,
Յաղթանակի պիտի փոխուի մեր պարտութիւնը վաղանցեալ,
Նորէն հայոց մարտիկներն Արարատին պիտ՛ տիրեն:

Հայաստանի հողին վրայ ուր արդ մեր հայ եղբայրներ
Արեւագօծ ժիր խոփերով կը հերկեն հողն բարեբեր,
Յոյս տուր անոնց վեհափառ եւ օրհնութիւնդ հայրական
Ու մեր ողջոյններն կաթոզին: Ըսէ անոնց թէ մենք յար
Ցանկանք տեսնել *հայու հոգին* յաւերժօրէն յաղթական:

«Պայլար», Հոկտեմբեր 28, 1956

ՎՇՏԱԽՈՑ ԾԱՂԻԿԻՆ

Բախտեն վշտախոց դու ծաղիկ ֆեֆոյշ,
Կարն գարունէ մ'ետք աշունը եկաւ,
Հովերն անփոյթ տարին ամէն յուշ . . .
Կեանքէն քեզ մնաց անբաւ վերք ու ցաւ:

Սէր կար սրտիդ մէջ ու խոցեր ծածուկ
Եւ անիմանալի երգեր դիւքական.
Բայց հոգերուդ հետ մնալով անշուք
Տակաւ առ տակաւ խամրեցար անձայն:

Հախրող թռչուններն ինկան թեւաբեկ,
Աշխարհի դարձաւ պարտէզ մ'անծաղիկ.
Զերթ անյոյս թռչնիկ գիշեր թէ ցերեկ
Ի գո՛ւր փնտռեցիր խաղաղ մի երդիք:

Սիրտդ էր երբեմն երկինք մ'արեւտո
Որ բոյր կը շողեր ամենուն վրայ.
Հիմա՝ սփոփիչ երգի մ'է կարօտ
Մինչ հեզ գեփիւտէն մըմունջ մ'իսկ չկայ:

«Պայքար», Յունուար 15, 1957

ԿԵԱՆՔԻ ՃԱՄԲԱՆ

Մեր կեանքի համբան շեղ ու գառիվեր,
 Մէկն անոր վրայ տատասկ է փռեր.
 Հոն կան սուր խիւներ եւ իժեր անգութ,
 Բայց պէտք է քալենք անվախ ու անփոյթ:

Քանի բարձրանանք կարծես այդ համբան
 Այլափոխուելով կ'ըլլայ տանջարան.
 Քանի խուզարկենք ու ծանօթանանք
 Նա յար կը թուի ունայն անըջանք:

Այս անդարձ համբէն մէզ ու մթապատ
 Մեր կամէն անկախ, բայց կամէնով հաստատ
 Անտեղիտալի գինուորի նման
 Անընդհատ կ'երթանք դէպ անէութեան:

Աշխարհ կուգանք մենք իբր ուսանող,
 Բայց դեռ ատակ չենք, թէ լոկ ափ մը հող
 Մեր մարմինն ամբողջ պիտ' լափէ, լուծէ,
 Քանզի այս կեանքի սեւ բաժինն այդ է:

Ինչպէս գարուններն վազով մ'անդադար
 Ժամանակին հետ կը թաւալին յար,
 Մարդիկ ալ նոյնպէս պիտ' գան ու երթան
 Ունայնութենէ միշտ ունայնութեան:

«Պայլար», Փետրուար 7, 1957

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՔ

Ձեզի թող ըլլան երկինքի անշէջ աստղերը բոլոր,
Տուէ՛ք ինձի լոկ՝ հայոց ոսկեհունչ լեզուն դարաւոր:

Քանզի ես այսօր նոր խօսք մը ունիմ արար աշխարհին
Եւ նոյնիսկ գայլի՛ք համաստեղներու մեծին ու փոքրին:

Թէ առաջարկուի ամբողջ Անգղիան իր Շէյքսպիրով,
Ես պիտ' գոհանամ մեր կոթողատիպ սո՛ւրբ, սուրբ Նարեկով:

Գաղիացոց համար Հիւկօն մեծամասնէ՛ս աստղ մ'է՛ յարանեմ,
Մեր Վարուժանն ալ աստուածապարգեւ ցանանէ՛ մ'է՛ վսեմ:

Գերմանիան ունի Կէօթէն վեհափառ իր բոքր աստղերով,
Բայց Թէ՛էնեանը նախամեծար է անհուն խորհուրդով:

Յոյներն ունին Հոմերոսն անմահ իր գոյգ երկերով,
Բայց հայուն համար Դուրեանն է անյաղթ իր խոր «Տրտունջ»ով:

Մեծ է Թուսթոն եւ արժանաւոր գաւակը ռուսաց,
Բայց Արովեան մը յոգնած սրտերու աստղն է լուսարծարծ:

Նիցչէն գերմարդով ցոյց կուտայ մեզի բիրտ ուժի ցամբան,
Հայ սրտի համար խիզախ Րաֆֆին է ընդմիշտ ախոյեան:

Հնդկաստանն ունի խորապաշտ Թակորն իր պարտէզին մէջ,
Սակայն մեր աստղը Շնորհալին է յաւիտեան անշէջ:

Պարսիկին համար Օմար Խայեամը մեծ իմաստուն մ'է,
Մեր անգուգական Նահապետ Քուչակն հայ սրտին մօտ է:

Յոր Երանելին իբրեւ ողբերգու դարերով լացաւ,
Բայց լոյս երբոր Ահարոնեանն երգեց հայուն վիշտն ու ցաւ:

Տանդէն յղացաւ կատակերգութիւնն երկնի եւ երկրի,
Չարեանցն ալ երգեց դարերն արեւոտ ու տառապանքի:

Ֆերտուսին իշխեց իր ժամանակուայ անդաստաններուն,
Իսահակեանն այսօր փայլող արեւն է հայոց լեռներուն:

Հէ՛ք ֆրանսացին գուցէ միշտ պաշտէ՛ Պոտլեռի ոգին,
Հայ սրտին համար Չօպանեանն է կենսատու արփին:

Երաժշտութեան կանառին առջեւ Պալսը հաննար մ'է,
Բայց Կոմիտասը, հայ հոգւոյն համար խաղաղ երկինք մ'է:

Մայքըլ Աննըլօն եգական դէմք մ'է աշխարհի համար,
Այվագովսկին ալ տիրող իշխանն է ծովերուն անծայր:

Եթէ բաղդատեմք օտար գուսաններ եւ Սայաթ Նովան,
Սայաթ Նովան է որ մեզ կը ժպտի հէք հարի նման:

Այս յաւերժատեւ տիեզերքին մէջ տիտան հաննարներ
Զերթ երկնի աստղեր պիտի շողշողան ցերեկ թէ գիշեր:

Եւ անոնց կողքին հայ տաղանդներն ալ յար ու հաւասար
Միշտ պիտ' պսպղան եւ լուսաւորեն աշխարհն արար:

Հայ հոգւոյն խորը անթեղուած գանձերն թողէք որ փայլին
Որպէսզի անոնց հուր նախանշներէն օտարներ խպնին:

«Պայֆար», Օգոստոս 10, 1957

ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ . . .

Մինչեւ ե՞րբ, եղբայր, ձեռքդ առած տապար
Մեծ յոխորտանքով դու մտնես անտառ,
Եւ սուրբ անտառէն ընտիր ծիլ ու ծառ
Անմիտ գայրոյթով ընես կացինահար:

Տակաւին երէկ Գեհէնի դեւերն
Այդ նոյն անտառին սրբագան ծառերն
Մահուան մանգաղով հնձել փորձեցին
Զըխնայելով մեծին ու փոքրին:

Օտար երկնի վրայ մենք բոյլ մը աստղեր
Թէ որ գուսպ չապրինք Աստուած չի ներեր,
Վատ արարք մ'է երբ եղբայր մը եղբօր
Մահ կը կամենայ եւ յուշեր անմոռ:

Հերի՛ք է կրկնենք անհիմն սոյն բառեր
Թէ հայրենիքն է մեր «թշուառ ու անտէր»,
Զըլլալու համար աւելի դժբախտ
Հայրենիքին դէմ չըլլանք ապերախտ:

Թող հեռու մնան մեզմէ ոյս ու հեռ,
Թող որ անընդհատ փայենք զուգահեռ . . .
Թէ նոյն արիւնը կը կրենք մեր մէջ,
Պահ մը դադրեցնենք ամէն բանավէն:

«Պայփար», Օգոստոս 23, 1957

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻՆ

ՅՈՒՇԱՐՁԱՆ

*Ո՞րտեղ է ընկած այն քարը հիմի,
Որ հողիս վրայ շիրիմ պիտ' լինի:*

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ո՛վ հայրենի գուսաններ, եկե՛ք սրգանք միասին
Մահը հայոց պու՛կտին, իր երգերովն քանկագին,
Եւ դուք ազիզ հովիւներ եւ որսկաններ յոյժ կայտառ,
Եկե՛ք կերտենք միասին դամբան մ'յաւէտ լուսավառ:

Ո՛վ հայրենի աղբիւրներ, արդ տխրագին երգեցե՛ք
Մեղեդիներ հոգեշնորհ, զի մշակ մը յոգնաբեկ
Մահուան ոյժէն պարտուած, աւա՛ղ, ինկաւ դաշտին մէջ . . .
Հայոց աւանդ ճգելով իր վեհաշունչ գրիչն պերն:

Եւ դուք ծաղկունք հայրենի՝ գեփիւտին հետ միաշունչ
Մըմնջեցե՛ք յաւիտեան, ու սրգացե՛ք անտրտունջ
Հայոց անմահ քերթողին բաժանման պահը տխուր . . .
Ձի դուք անոր գրչին տակ դարձա՛ք հաղորդ ու համբոյր:

Եւ դուք լեռներ հայրենի Արագած ու Արարատ,
Արտասուեցե՛ք ի յարգանս ձեր երգիչին հարագատ:
Ձի նա հսկայ մ'էր ձեզ պէս, իր հոգին էր ադամանդ,
Խօսքերն էին գոհարներ, տաղանդն էր յարգաւանդ:

Եւ դու անգի՛ն Հայաստան, որդեկորոյս ո՛վ հէ՛ք մայր,
Աստուած վերէն թող գթայ քու խոց սրտիդ վշտահար:
Քու որդիքդ ամենայն միշտ պիտ' խնդրեն Տիրոջմէն
Որ մեծ պու՛կտին հոգին հայուն հսկէ երկինքէն:

«Պայլար», Հոկտեմբեր 26, 1957

ԵՐԲ ԱՇԽԱՐՀՆ ՔԱՈՍ ԷՐ

(Խորհրդապատկեր)

Արարիչն մեր անըմբռնելի
 Միտքն ստեղծողի ցանկութիւնով լի,
 Երբ Ան կը շրջէր աշխարհն ամալի,
 Երբ ծովերն էին անպէտ հայելի.
 Օր մը սխալմամբ ջուրին նայեցաւ
 Եւ ջուրին մէջէն իրեն ժպտեցաւ
 Իր Աստուածութեան պատկերը վսեմ:
 Թէեւ հոգեխոռով բայց ուրախադէմ
 Մտքին մէջ ծնաւ գաղափար մը նոր
 — Կերտել արձան մը եւ յանձնել անոր
 Խորհող, ստեղծող, գանկ մը լուսաւոր,
 Որ ան լոկ իշխէ տարրաց երկրաւոր,
 Որ ինքն մնայ յաւէտ թագաւոր
 Երկնի եւ երկրի իրաց բիւրաւոր:
 Եւ իսկոյն Աստուած արդար յուզումով
 Հողին նայեցաւ լո՛ւտ, հոգեխոռով.
 Բուտ մը հող վերցուց, հողն էր անարժէք.
 Նա զգայացունց լացաւ սրտաքել:
 Շիք շիք արցունքներ խտունեց հողին հետ,
 Շաղեց, շաղախեց նման մեծ վարպետ.
 Նաեւ քրտինքէն բիւր բիւր կաթիլներ
 Հողին մէջ ինկան նման բորբ աստղեր,
 Նոյնիսկ արիւնն իր թանկ ու սրբագան
 Հողին հետ խտունեց բաժակ մը լման:
 Բայց հողն հող էր, եւ հողէն միայն
 Լոկ խոտ կը բուսնէր ու ծաղկումք բուրեան:
 Եւ յուսալուծած մեր տէրն Աստուած
 Թողուց երկիրը եւ երկինք գնաց:
 Կանչեց Արեւը կենսունակ, հզօր,
 Ու հրահանգեց ձայնով բամբ ու գոռ.
 — Քեզ պէտք է կառչին, թէ՛ ծով, թէ՛ ցամաք
 Եւ միջոցին մէջ ամէն մոլորակ:
 Դուն ալ ո՛վ լուսնակ շողերովդ անգօր
 Կ'ըլլաս թագուհին աստղաց բիւրաւոր:
 Եւ գիշերները կը սփոփես ընդմիշտ
 Սիրող սրտերն վշտոտ թէ անվիշտ:
 Ապա բանակէն անքիւ անհամար
 Ընտրեց նա չճնաղ երկու սիրահար,
 Այրն էր Ադամ իսկ էգը Եւան
 Երկինքն էր վկայ անոնց հեգութեան:
 Եւ հզօրն Աստուած անոնց մօտեցաւ
 Տիրող ձայնով մը ան ալսպէս ըսաւ.
 — Դուք իմ սիրելիք երկինքին ներքեւ

Ունի՛ք աշխարհ մը՝ քառս մ'արդարեւ,
 Բայց կան անասունք, ծաղկունք բիրագան,
 Կան միրգեր համեղ, թռչներ զանագան,
 Ինչ որ կը պակսի՝ մարդն է եզական
 Մարդը մտացի, մարդն անվախնան.
 Քառս աշխարհին մէկ մասը միայն
 Զքնաղ դրախտ մը դրախտ աննման,
 Դուք պիտ' ամփոփուի՛ք դրախտն անել
 Զփորձուի՛ք գործել մեղքեր անվայել:
 Եւ որոտում մը, ցնցումներ ասեղ
 Իսկոյն երկինքը պատռեցին տեղ տեղ:
 Եւան սոսկումէն մարեցաւ, ինկաւ,
 Աղամն ասարեկ անոր փաթթուեցաւ,
 Եւ ձեռք մը անյայտ ձեռք մը գորաւոր,
 Գրկեց երկումն ալ մեղմ, գգուշաւոր,
 Ու հրեշտակաց բանակ մը վսեմ
 Աղամն ու Եւան բերին շէն Եդեմ:

* * *

Անոնց մրափը թէ որքան տեսց
 Թէ որքան ատեն երկինքն անձրեւեց,
 Թէ քանի դար ետք Աղամն ու Եւան
 Կէս մ'արթննալով դէս դէն նայեցան,
 Ու մէկէն տեսան առիծն կը մոնչէր,
 Զուարթ ափորը հաւերն կը կանչէր,
 Տեսածնին արդեօք երա՞գ էր, ի՞նչ էր,
 Գաղտնիք մը կար որ զիրենք կը տանջէր:
 Աղամ լրջադէմ մտաւ խոկմանց մէջ
 Ինքն իրեն հետ սարքեց բանավէն.
 — Ո՞ւր եմ ես արդեօք, ո՞վ եմ, ես ի՞նչ եմ,
 Ո՞վ տուաւ մեզի այս դրախտը շէն:
 Այս խորհուրդներով նա յափշտակուած
 Ուզեց որոնել եւ գտնել Աստուած:
 Քննոյ՞ջ փափաք մը բխեցաւ սրտէն,
 Տեսաւ որ արփին կը խայտար վերէն:
 Դիտեց շուրջը որ Եւան ալ չկար
 Արդ մենութեան մէջ ան կը դողդղար:
 Ու նա վերջապէս հաստատ քայլերով
 Շրջեցաւ աստ անդ, տեսաւ ցուլն ու կով
 Յար թափառելով դրախտն ամբողջ
 Տեսաւ կենդանիք եւ բոյսեր բողբոջ,
 Տեսաւ թռչները գուարթ ու աշխոյժ,
 Տեսաւ սողուններն դանդաղ ու վատոյժ
 Տեսաւ որ եղնիկն եղնորդ մը ունէր
 Եւ բոյներու մէջ կային շատ ձուեր:
 Հսկայ ծառին քով կար ծառ մը վտիտ
 Եւ գրաստին քով քուռակ մը անմիտ:

Տեսաւ ամէն իրք կը բազմանային
 Բայց տկարն էր միշտ գոհը գորեղին:
 Այս ամէնուն մէջ թափուն բան մը կար
 Եւ Աստուածային գաղտնիք մ'անպատճառ,
 Այս խորհուրդներով յաւէտ շուարած
 Ան վնոնց կրկին որոնել Աստուած:
 Ադամն սրատես բանգէտ մարդու պէս
 Քննեց ամէն բան, տեսաւ մի աղուէս,
 Եւ արագիլ մը երկայնապարան
 Կը կտցահարէր ո՞՞ մը անպիտան:
 Ժամն ուշ էր արդէն եւ յոյժ հոգահան
 Դեռ մինչ այդ պահուն չէր գտած Եւան,
 Արեւը վաղուց իր շողերն ժողված
 Խոր ձորն էր ինկեր պտոյտէն յոգնած
 Ու սեւ խաւարը սեւ ամպի նման
 Ծածկեր էր արդէն ամէն ամէն բան:
 Այս խոր լռութեան եւ ամայութեան
 Երկինքէն յանկարծ ժպտաց լուսնկան:
 Տակաւ գորտերն ալ կը հեկեկային,
 Միշտ բողբոջելով վեհ արարիչին:
 Պոռոտ ծղրիթներն ալ ամբարտաւան
 Կ'երգէին անկարգ ու ահեղաճայն:
 Եւ կայծոռիկներ յոյժ փոքրամարմին
 Կեանքի եւ մահուան պարն կը պարէին:
 Ադամ մարահատ աչքերը փակեց
 Ու լռութեան մէջ այսպէս մտածեց.
 — Երբ լու մը անպէտ իր փոքրերն ունի
 Եւ վնասարար իրերը փոքրոգի
 Բազմանալ կրնան կարն ժամանակով,
 Եւ ինչո՞ւ ապրիմ գաւկի կարօտով:
 Ու քնաթափախ եւ ծանրամարմին
 Լուսնի լոյսին տակ ելաւ վերստին
 Կարծես թէ անդին բան մը նշմարեց.
 Շտապեց տեսաւ, թիւով տասն եւ վեց
 Հերածածկ մարմնով բայց մարդանման
 Կապիկներ որոնք կը ծաղրեն Եւան:
 Եւային հանդէպ առաջին անգամ
 Նոր զգացում մը ունեցաւ Ադամ:
 Նոր ու լուսաւոր պայծառ աչքերով
 Տեսաւ կանացի դէմք մը հոգեթով:
 Եւան ալ նոյնպէս սրտի կարօտով
 Դիտեց Ադամը տամուկ աչքերով:
 Դիտեց Ադամին դէմքը փառահեղ,
 Դիտեց հասակը ցցուն ու անշեղ:
 Եւ անհամարձակ քայլերով դանդաղ
 Անոր մօտեցաւ սրտով մ'անխաղաղ:
 Ադամ սրտուրախ եւ քաջալերուած

Վայրկեան մը երկնի պատուէրը մոռցած
 Եւային համար բացաւ իր թեւերն
 Եւ բացագանչեց — ահա իմ սէրն:
 Եւ պահ մը անոնք շրթունք շրթունքի
 Հոն արձանացան որպէս մարմին մի:
 Իսկոյն լսեցին ձայն մը ահով լիք
 Որ կը յեղյեղէր — դուք մեղք գործեցիք:
 Ձերք մեղագործներ անոնք երկուստեք
 Քարայր մը մտան լուռ ու հոգեբեկ:
 Անփեղ քարայրին մութն էր տիրական
 Յուրտ ու խոնաւ էր որպէս գերեզման:
 Հարկ էր ծածկուիլ ծածկոց իսկ չկար
 Անոնք մըսեցան գիշերն անդադար:
 Բան մը կար կարծես գիրենք հալածող,
 Էութիւն մը վեհ, Աչք մը լուսաշող:
 Ու երկար ատեն անկիւն մը սմբած
 Լսել կարծեցին ձայն մը գայրացած,
 Ձայն մը անողոք, ձայն մը տիրական
 Որ կ'ուխտէր պատժել Ադամն ու Եւան:
 Ինչպէս որ գողին սիրտն է անհանգիստ
 Երբ մտաբերէ պատժող օրէնքն իսխտ,
 Անոնք ալ նոյնպէս օրէնքին առջեւ
 Արդ կը դողային գերք աշնան տերեւ:
 Եօքն օր եօք գիշեր ծարաւ ու նօքի
 Ձերք սիրահարներ փակած կողք կողքի
 Լոկ երագներով ապրեցան անոնք . . .
 Եօքն օր եօք գիշեր անվիշտ ու անհոգ:

* * *

Անցան շատ օրեր, անցան ամիսներ,
 Կիսն առաջին այժմ ծոցաւոր էր:
 Օր մ'ալ երկունքի ցաւերով ահեղ
 Ծնունդ տուաւ նա տղու մ'հրաշագեղ:
 Եւ նախամարդուն բոյնն առաջին
 Լուսաւորուեցաւ մանչով մը անգին:
 Ուրախ էր Ադամն, գոհ էր եւ Եւան
 Քանզի այդ գաւկով անոնք տիրացան
 Գիտութեան մը՝ եւ գաղտնիքն անման,
 Որու շնորհիւ մարդերն այսօրուան
 Անդադար կ'անին ու կը բազմանան:

* * *

Երկնից տարագիր Ադամն ու Եւան
 Խոր ծերութեան մէջ երազ մը տեսան,
 Տեսան դէմք մը որ արեւէն պայծառ
 Յամբ քայլերով իրենց մօտ կուգար:
 Իսկոյն նանչցան տէրն երկնաւոր,

Գարձան գառնուկներ խօսելու անգոր
Ու սարսափահար մտաբերեցին
Վեհ արարչութեան պատուէրն առաջին.
«Զփորձուի՛ք գործել մեղքեր անվայել
Երբ դու՛ք ամփոփուի՛ք դրախտն անել:»
Բայց տէրն Աստուած մոռցած ամէն յուշ
Յոյժ գորովալից բառերով քննոյշ
Ըսաւ — որդիներ երկինք համբարձէք
Ու հոն աստղաց հետ յաւէտ փայլեցէք:

«Միքանի Գօտի», 1958

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Երգ ու նուագի վեհաշունչ վարպետ՝
Փա՛նֆ ֆե՛զ, հագա՛ր փառֆ, խոհուն վարդապետ,
Դուն որ գեփիւոիւն սօսափը ֆնֆոյշ
Սարերէն բերիք ծաղկանց հետ անուշ:

Մոգական լարովդ, անհա՛ս Կոմիտաս,
Հայոց երգերը հագան նուրբ տարագ,
Ու հայ աղջիկներ «կուժերը առած»
Երգեցիւն անվերջ երգերդ լուսարծարծ:

Հեռո՛ւն դաշտին մէջ, մանկալն յոգնած
Դեռ կը մըմնջէ «Օրհնեալ է Աստուած» . . .
Օրհնեալ ըլլաս դուն յոյսի վարդապետ
Որ խինդ սփռեցիր ամէն երգի հետ:

Գարունը եկաւ, ծառերն ծաղկեցան,
«Միրանի ծառ»դ հնչե՛ց ողբաճայն.
Ու սիրող տղան իր «Սիրտը մոմուն»
Կանչեց իր եարը սարէն ծաղկարոյր:

Եւ պանդուխտ հայը օտար երկնի տակ
«Կոունկ»իդ կանչէն սիրտը փլատակ,
Հծծեց ողբագին ամէն սեւ ամիս
«Կոունկ մեր երկրէն խապրիկ մը չունի՞ս»:

Մեր վեհ Մասիսէն եւ Արագածէն
Հայոց դարաւոր երգերը ամէն
Վերափոխուեցան հաննարին լոյսով
Ու դարձան աստղեր շինականին ֆով:

Բայց միջօրէին հագիւ քէ հասած՝
Զար մոլորակ մը բոցեդ ալլալած,
Խափանեց լոյսդ: Դուն այնուհետեւ
Դարձար իտէա՛լ ու՝ արեգ լուսաթեւ:

Երգի, նուագի հոգեյոյս վարպետ,
Փա՛նֆ յիշատակիդ, անմա՛հ վարդապետ:
«Հագար ու մի խաղ» երգերուդ համար
Ու երգերուդ հետ, կ'ապրի՛ս դարէ դա՛ր:

«Միրանի Գօտի», 1959

ԺԱՄԱՆԱԿԸ

Անյոյս ու անլոյս գիշեր մ'առանձին,
Աչքերս յառած անծայր անհունին,
Փորձէի գտնել մի կանթեղ անմար
Որ մահէս վերջն իսկ պէտք է պլպլար:

Որոնումիս պահուն ես հանդիպեցայ
Մարդու մ'ալեւոր, մարդու մը հսկայ,
Որ ապրեր էր ան դարե՛ր բիրաւոր՝
Բայց դեռ աշխոյժ էր եւ ամենագոր:

Ըսի. «Ո՞վ ես դուն ալեհեր արքայ,
Որ հովի նման խիստ արագասահ,
Անդուլ, անդադար, յար կը թաւալիս
Եւ ամէն էակ մահուան կը տանիս:»

«Ժամանակն եմ ես» ան պատասխանեց,
«Եւ կ'յափշտակեմ մանուկ թէ տարեց.
«Մահն եմ ստեղծեր կեանքին առընթեր,
«Խաւարն ալ լոյսին անբաժան ընկեր:»

«Կ'շնորհեմ ոմանց տարիներ անբաւ,
«Ոմանց կարն օրեր տաղանդ ու համբաւ,
«Աւա՛ղ որ մարդիկ կուգան ու կ'երթան,
«Բայց չեն ըմբռներ բանն այս իրական:»

«Պահիկ մը կա՛նգ առ, ո՛վ վեհ ժամանակ,
Թող վերէն շողայ անմահն արեգակ.
Թող մարդ էակը Աստուծոյ նման
Ապրի՛, ստեղծէ՛ մինչեւ յաւիտեան:»

Խնդրածս այս էր խուլ ժամանակէն,
Բայց ժամանակը խիստ անփութօրէն՝
Մի՛շտ ծիծաղելով՝ սուրեց ու անցաւ
Եւ իր ժանտ շունչէն կանթեղս շիջեցաւ:

«Ծիրանի Գօտի», 1960

ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

Տէ՛ր, չափսուսացի՞ր ծաղիկ հասակիս,
 Որ լուսարացը դեռ չըվայելած,
 Մայրամուտը սեւ կամեցար ինձի:
 Կեանքս կարն եղաւ, ակնքարք մ'ամբողջ,
 Երա՞գ էր թէ կեանք, այդ իսկ չիմացայ:
 Սիրտէս, հոգիէս լուռ բայց լիայոյս,
 Ի՛նչ ի՛նչ երագներ ի սպառ ջնջեցիր:
 Բարի լոյսին դէմ աչքըս նոր բացուած,
 Անյոյս գիշերը՝ իր սեւ թեւերով
 Էութիւնս ամբողջ մնշեց ու տարաւ:
 Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ,
 Կեանքիս արեւը դեռ թարմ ու կանանչ
 Ինչո՞ւ բանտեցիր:
 Ապրելու օրեր ունէի դեռ շատ,
 Եւ շա՛տ գարուններ ծաղկելու համար:
 Օրերըս ամէն տակաւին չապրած,
 Ինչո՞ւ անարեգ տապանն այս տխուր.
 Թէ որ քու կամքդ էր արարքն այս դաժան,
 Գէթ թոյլ տուր, Տէ՛ր իմ, որ ծաղիկ հոգիս
 Թեւածէ երկիւնք,
 Եւ գերք երկնաբնակ աստղ մը շնչաւոր
 Ապրի օրերս ու գարուններս բոլոր,
 Զորս ես չապրեցայ աշխարհի վրայ:
 Եւ խնդրանք մ'ալ, Տէ՛ր,
 Գթա՛ ցկեանս տառապող մարդոց.
 Յաւն անողոք, կրակը վիշտի,
 Ի սպառ հեռացուր անոնց սիրտերէն:
 Եւ միտքարէ՛ մայրս վշտակոծ,
 Եւ փոթորկահար անարատ սրտին
 Տո՛ւր խաղաղութիւն:

«Պայլար», Յունուար 27, 1971

ԱՆՅԱՅՏ ՀԵՐՈՍԸ

Կին մը կաւատ,
Անսիրտ, անսէր ու անհաւատ,
Նստած անպէտ կը յօրանջէ,
Անցնող աշերտն ներս կը կանչէ:

Նէ վատարադճ
Իր հոգին է փտտած ատաղճ:
Եւ տունն աշո մեղքերու բոյն,
Ուր տկարներ մերթ կ'ըմպեն բոյն:

Իր գոհերն են
Խարուած կոյսերն անապաւէն,
Որոնց հոգին նկուն, անգէն,
Սաղայէլին ցանցն ինկած են:

Մի պատանի
Որ սրտին մէջ պատկեր մ'ունի,
Նեղիկ դունէն լո՛ւտ, աննշմար,
Ներս կը մտնէ ամօթահար:

Արդ տունէն ներս
Քիչ մը շփոթ, բայց ժպտերես
Անհաշտօրէն նա կը դիտէ
Մերկութիւնն մը գուրկ պաշտանքէ:

— Ի՞նչ կ'սպասէ:
Այս բառերը սրտակեղեք
Մեղագործին բերնէն թռան
Ու պայթեցան ոռումքի նման:

— Ըսէ՛ ինձ՝ քոյր,
Քու մեղքերուդ անգէտ ու կոյր,
Հոս եկած էք քո՛յր իմ թշուառ
Հանոյքի՞, թէ՛ հացի համար:

Երբ պատանին
Աւարտեց իր խօսքերն ուժգին,
Կինն աշո դժբախտ իսկոյն զգաց
Մերկութիւնն իր եւ պարտուած

. . . Աչքերով թաց
— Անհայր որք մ'եմ ըսաւ յանկարծ,
Ունիմ քոյրեր . . . մայր մը անկար . . .
Գործ փնտռեցի . . . ինձ գործ չկա՛ր . . .

— Քոյր իմ անգին,
 Ե՛լ, շտապէ, հագուէ կրկին,
 Առ այս հասցէն եւ գնա՛ տուն,
 Վաղն իսկ փութա՛ այդ գործատուն:

— Բայց ո՞վ է՞ դուք
 Որ մեղքերուս վրայ յատուկ,
 Կարեկցական ջերմ հոգիով
 Կ՛ուզէ՞ ջնջել արատն այս ծով:

— Քոյր իմ անբախտ,
 Զինչ հոգիէդ անէծքն այս վատ
 Պէտք է ջնջել, որ դու կրկին
 Ապրիս, ըլլաս պատուաւոր կին:

Ու սրարշաւ
 Հէ՛ք պատանին անհետացաւ:
 Մինչեւ այսօր ոչ ոք գիտէ
 Թէ անծանօթ հերոսն ո՞ւր է:

«Պայփար»

ՀՈՂԸ

Զօն հայ եղբայրներուս

Մի բաղձար տղաս
Երկինքին անհաս.
Հո՛ղն է կարեւոր,
Զի դու ամէն օր
Հացդ մաս առ մաս
Հողէն կը ստանաս:

Քու տունդ կայուն,
Նոյնպէս՝ ամէն տուն
Եւ ամէն բարիք
Հողին կը պարտինք:
Այդ հողը, որդի,
Հո՛ղն է հայրենի:

Առանց այդ հողին
Մարդիկ կը դառնան
Անգոր թշուառներ,
Եւ քափառական:
Այդ անուշաբոյր
Հայրենի հողին
Տուր անթի՛ւ համբոյր:

Հայրենի հողին
Մէկ շերտը, տղաս,
Օտար հողերէ,
Օտար ծովերէ,
Կրկինը կ'արժէ:
Ինչու որ, որդի,
Հողն այդ հայրենի
Հայոց քաջերու
Անիւններն ունի:

Այդ նուիրական
Շերտ հողին համար
Կեանքեր անհամար
Զոհուեցան, իջան
Ի լուռ գերեզման:
Հողն այդ հայրենի
Սո՛ւրբ է, սուրբ, որդի:

Սրբութեան մասն այդ
 Իբրեւ նառագայթ
 Քու հոգիէդ ներս
 Միշտ թող շողշողայ:

Հաւատա՛, որդի,
 Հողն այդ հայրենի
 Զօրութիւն մ'ունի.
 Այդ գօրութենէն
 Կը ստանանք սէր, կեանք,
 Ուժ եւ յաղթանակ:
 Հողն այդ հայրենի
 Զի՛ լ՛բես, որդի:

Երբ անարգ մահը
 Գայ ու գիս տանի,
 Իմ ոսկորներս
 Հայրենի հողին
 Սիրտին մէջ թաղել
 Զի՛ մոռնաս, որդի:
 Կ'ուզեմ հոն թաղուիմ,
 Նոյնիսկ հոն փտտին
 Գալիմ սերունդիս
 Անհուններն այ:

Մինչեւ որ Աստուած
 Յարութեան օրը
 Զեոճովն պիտանի
 — Երկիւղածութեամբ —
 Մեր անհունները
 Առնէ վեր տանի:
 Միայն եւ միայն
 Օրն այդ Յարութեան
 Կամօքն Աստուծոյ,
 Կը թողուս, որդի,
 Հողն մեր հայրենի:

«Պայխար»

ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Բազմահազար գիշերներ
 Ջինջ երկինքը դիտեցի,
 Կարծես աստղերն ըլլային
 Քեթրւածներ պիտանի:

Բազմահազար գիշերներ
 Լուսնի դէմքը սերտեցի,
 Ու հոն տեսայ ֆանդակուած
 Հակատագիրս ահռելի:

Բազմահազար գիշերներ
 Պանդուխտի ցաւս երգեցի.
 Իր վիթխարի բոցերէն
 Ահաբեկած՝ ես լացի:

Բազմահազար գիշերներ
 Հայ արուեստը օրհնեցի
 Եւ իր անմահ փառքերուն
 Թարմ ծաղիկներն ձօնեցի:

Բազմահազար գիշերներ
 Խոր հաւատով պաշտեցի
 Հայու հոգին լուսատու
 Եւ նախնիներն պանծալի:

«Նոր Գիր»